Ազգ Azg

17 ՓԵՏՐՈՒԱՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 17(4408)

ISSN: 1829-1651

# Թուրքիա-Իրաք երկաթուղին վերաբացվել է

BBC-ի տեղեկացմամբ՝ 20 տարվա ընդմիջումից հետո վերաբացվել է Թուրքիա-Իրաք երկաթուղին: Այն Իրաքի հյուսիսից կանցնի Սիրիայի տարածքով եւ կմտնի Թուրքիայի արեւելյան շրջաններ:

Հավելենք նաեւ, որ անցյալ տարվա հոկտեմբերին Թուրքիան հայտարարեց իր մտադրության մասին՝ Իրաքի Արբիլե քաղաքում բացելու հյուպատոսարան: Իսկ Թուրքիայի արտգործնախարար **Դավութօղլուն** հայտարարել է. «Եկել է այն ժամանակը, երբ արաբները, քրդերը եւ թուրքերը կվերակառուցեն Մերձավոր Արեւելքը՝ համատեղ խիզախ քայլեր ձեռնարկելով»:

Տարածաշրջանը, եւ ոչ միայն մերձավորարեւելյան, իրոք կարիք ունի խիզախ քայլերի:

Հ. Ա.

# Մինսկի խմբին առաջարկները դեռ ներկայացվում են

## *Իսկ ԵԱՀԿ-ն գագաթաժողով կանցկացնի 11 տարի ընդմիջումից հետո՝ Աստանայում*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պաշտոնական այցելությունները հետաքրքրական են լինում, երբ սպասելիքներ կան ու դրանք արդարանում են կամ առնվազն որեւէ նորություն է մտցվում, որեւէ նոր բան է հայտնի դառնում, էլ չասենք, որ իսկապես նոր ու առանձնակի տարբերվող իրողություն է ի հայտ գալիս:

Ակնկալիքներ, թե ԵԱՀԿ գործող նախագահ, Ղազախստանի պետական քարտուղար-արտգործնախարար Կանատ Սաուդաբաեւի այցելությունը տարածաշրջան որեւէ նոր բան կհաղորդի, առանձնապես չկային, ու դրանք երեկ հաստատվեցին, քանի որ Կանատ Սաուդաբաեւը ամենայն բծախնդրությամբ Երեւանում կրկնեց այն, ինչ ամենայն բծախնդրությամբ պատրաստել ու մատուցել էր Բաքվում:



ՖՈՏՈԼՈՒՐ

Երեւանում ԵԱՀԿ գործող նախագահի հնչեցրած խոսքը գրեթե բառացիորեն կրկնում էր այն, ինչ **«Ազգն»** արդեն հրապարակել է երեկվա համարում՝ որպես Ղազախստանի արտգործնախարար Կանատ Սաուդաբաեւի խոսք՝ ներկայացված Բաքվում:

Ավելացնենք, որ Երեւանում տարբեր ասվեցին միայն երկրի անվանումն ու բնականաբար Հայաստանի նախագահի՝ Ղազախստանի նախագահի հետ բարեկամության ու ջերմության վկայության համատեքստում, Հայաստանի նախագահի անունը: Միակ ընդգծված տարբերությունը, որ չհնչեց ԵԱՀԿ գործող նախագահի խոսքում, բայց առկա է ԵԱՀԿ պաշտոնական կայքէջում Երեւան նրա այցելության մասին հաղորդագրության մեջ, հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանն ուղղված գործընթացի հանդեպ դրական վերաբերմունքն է:

ԵԱՀԿ գործող նախագահի երեկվա այցելությունն ու հանդիպումներն ամենասկզբից եւեթ ժամանակացույցի հետաձգմամբ գնացին:

*Տես էջ 3*

**ԵՐԿՐԱՊԱՀՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ**

# Նույն երամի տղերքն իրարից նեղանալու իրավունք չունեն



ՖՈՏՈԼՈՒՐ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Արհեստական թե ոչ, բայց Երկրապահ կամավորականների միության երեկ տեղի ունեցած համագումարի շուրջը նախօրոք հետաքրքրություն էր ստեղծվել: Հատկապես լրատվամիջոցներ էին եղել, որ գրել էին, թե Արամ Սարգսյանը գալու եւ մի ցնցող ելույթ է ունենալու, ենթադրվում էր, որ ամոթանք է տալու «իշխանական» երկրապահներին, որ «անտեր» են թողել իրենց ընկեր (այդ թվում՝ բանտում) «ընդդիմադիր» երկրապահներին, որոնք, ի դեպ, ներկա չէին համագումարին (Սմբատ Այվազյան, ԵԿՄ փոխնախագահ Մյասնիկ Մալխասյան եւ այլք): Բայց Արամ Սարգսյանը համարյա թե միասնության դաս տվեց նրանց, ովքեր աշխարհի բոլոր տեսությունները կառուցում են բացարձակապես ընդդիմադիր պատուհանից: Այդ մասին՝ ավելի ուշ: Ասենք, որ երեկ ԵԿՄ համագումարը Մանվել Գրիգորյանին կրկին ընտրեց միության նախագահ: Մինչ այդ իր ելույթում նա եւս միավորման կոչ էր արել: Ասաց նաեւ, որ երկրապահն իր գլուխը բարձր պահելու պատիվը վաստակել է արյամբ. «Մենք զիջելու բան չունենք, եւ դեռ շատ բան ունենք ապացուցելու», ասաց նա: Նույն տոնայնությամբ էր նաեւ ԵԿՄ համագումարին ներկա պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը՝ տարածաշրջանային իրադրությունն, ըստ նրա, թելադրում է մեզ միասնական լինել. երկրապահի հետ կանգնած լինելով պետության կազմավորման ակունքներում՝ նրա հետ էլ պետք է հաղթահարենք մոտակա խնդիրները:**

*Տես էջ 3*

# Ղարաբաղյան հարցով ղազախական փաթեթ՝ Ալիեւ կրտսերին

**Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին է փոխանցել ղարաբաղյան հակամարտության կարգավորման միջոցների փաթեթ: Այսպիսին է ձեւակերպումը այն տեղեկատվության մեջ, որ տարածել է «Ինտերֆաքս-Ադրբեջանը»՝ հղում անելով Ղազախստանի ԱԳՆ միջազգային տեղեկատվության հանձնաժողովի ղեկավար Ռոման Վասիլենկոյին:**

**Այդ առաջարկությունները Ալիեւ կրտսերին է փոխանցել ԵԱՀԿ գործող նախագահ, Ղազախստանի պետքարտուղար-արտգործնախարար Կանատ Սաուդաբաեւը՝ փետրվարի 15-ին Բաքվում Ադրբեջանի նախագահի հետ հանդիպմանը:**

**Միեւնույն ժամանակ, Վասիլենկոն որեւէ մանրամասն չի հաղորդել, թե ինչ միջոցների ու դրանց փաթեթի մասին է խոսքը: «Ղազախստանը «ազնիվ բրոկերի» դերով է հանդես գալիս, որպես անկողմնակալ միջնորդ՝ աջակցելով ԵԱՀԿ միջնորդական ջանքերին եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդներին», ասել է Ղազախստանի ԱԳՆ ներկայացուցիչը:**

Ա. Հ.

# Թուրքերը, «Եվրոտեսիլն» ու... Հայոց ցեղասպանությունը

Թուրքերի սերը դեպի սկանդալները ու ամեն տեղ հայոց ցեղասպանության փաստը շահարկելու հակվածությունն արդեն դառնում է բնավորություն: Հաշվի առնելով նախորդ փորձերը (նմանատիպ մի սկանդալ էլ բարձրացրեցին, երբ Անդրեն էր մասնակցում «Եվրոտեսիլին»), կանխատեսելի էր, որ թուրքերն այս անգամ էլ կանդրադառնային «Եվրոտեսիլ» մրցույթ-փառատոնին ու կսկսեին քննադատել Հայաստանի երգը, բայց որ դա այսքան շուտ կլիներ, ոչ ոք չէր կասկածում:

Anadolu գործակալության փոխանցմամբ թուրք կոմպոզիտոր Յագուբ Մոտլուն իր վրդովմունքն է արտահայտել 2010-ին Հայաստանը ներկայացնող Եվա Ռիվասի երգի կապակցությամբ: Ըստ նրա, երգը պարունակում է քաղաքական ենթատեքստ՝ կապված Հայոց ցեղասպանության հետ: «Apricot Stone» երգում երգչուհին ակնարկում է 1915թ. ցեղասպանության մասին: Ես հայերի թշնամին չեմ, բայց այդ երգը ցույց է տալիս հայերի պահանջատիրությունը հայոց ցեղասպանության վերաբերյալ», ասել է թուրք կոմպոզիտորը եւ մեջ է բերում երգի առաջին քառատողը՝

«Բազում տարիներ առաջ, մանուկ, անցած օրերում,

Մայրիկն ասաց. իմանաս՝ դառն է աշխարհն ու տրտում,

Բայց թե կուզես տեղդ գտնել դու մարդկանց շարքում՝

Հիշիր, զավակ, սիրով արա ամեն ինչ կյանքում»:

*Տես էջ 2*

# Թուրքիայում ԱՄՆ դեսպանը «պատասխանել է» ցեղասպանության վերաբերյալ հարցին

**Թուրքական «Զաման»-ի տեղեկացմամբ՝ Անկարայում ԱՄՆ դեսպան Ջեյմս Ջեֆրին այցելել է Մեջլիս եւ պատասխանել լրագրողների հարցերին: Նախ դեսպանը հույս է հայտնել, որ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն կկարողանա համոզել Իրանին՝ «ցանկալի արդյունքների հասնելու համար», կապված Իրանի ատոմային ծրագրերի հետ. «Մենք մեծ հույսեր ենք կապում Թուրքիայի հետ այս հարցում», ընդգծել է դեսպանը, ակնարկելով Դավութօղլուի երեկ Թեհրան կատարած այցին:**

**Հայոց ցեղասպանությանը Վաշինգտոնի մոտեցումներին վերաբերող հարցին՝ դեսպանը բավական «դիպուկ» պատասխան է տվել. «ԱՄՆ-ը կարծում է, որ հայ-թուրքական գործընթացներն անչափ կարեւոր են, մենք ամեն կերպ օժանդակում ենք այդ գործընթացներին, որոնք արդեն թեւակոխում են երկու երկրների խորհրդարաններում քննարկումների փուլ: ԱՄՆ-ը կարեւորում է նաեւ երկկողմ հաստատված ճանապարհային քարտեզի նշանակությունը»:**

Հ. Ա.

# Մի ձեռքով ստորագրում են, մյուսով՝ խախտում



ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հանուն մարդկային կայուն զարգացման» ՀԿ-ի նախագահ **Կարինե Դանիելյանը** դժվարանում է ասել, թե որն է բնապահպանության թիվ մեկ խնդիրը: Այս ոլորտում պրոբլեմները շաղկապված են: «Բայց երեւի գլխավոր խնդիրը շարունակում է մնալ ընդերքի օգտագործումը, որ բերում է աղետալի եզրահանգումների», նկատում է նա:

2012-ին Ռիո դե Ժանեյրո քաղաքում կանցկացվի Ռիո+20 գագաթաժողովը, որի նպատակն է քննարկել երկրների բնապահպանական խնդիրները: Հայաստանը նույնպես մասնակցում է այդ միջոցառմանը: Ռիո+10-ի ժամանակ ՄԱԿ-ը Հայաստանը ներառել էր սեւ ցուցակի մեջ: Կայանալիք գագաթաժողովում ներկայացվելու են Թեղուտի անտառների եւ Սեւանի հիմնախնդիրները: «Բնապահպանության առումով աղետալի պայմաններում հանքարդյունաբերություն զարգացնելը, այն էլ անտառային տարածքում, այսքան կեղտոտված մթնոլորտում, հանցագործություն է: Մի՞թե ուզում են լինել երկիր, որի գետերը լի են թափոններով, քաղաքները կեղտոտված են: Պետք է հասկանան, որ այս պայմաններում տուրիզմը չի կարող զարգանալ: Հայաստան կայցելեն միայն սփյուռքահայերը՝ իրենց հայրենիքը տեսնելու համար:

*Տես էջ 2*

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ**

**հրապարակում է**

Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի 2009թ. նվիրատուների անվանացանկը եւ խորին շնորհակալություն հայտնում բոլորին: Նվիրատուների անվանացանկի առաջին մասը հրապարակվեց օրաթերթի փետրվարի 16-ի համարում, իսկ հաջորդ 3 հատվածները՝ փետրվարի 18-ի եւ 19-ի համարներում: Ամբողջական ցանկը կարող եք տեսնել նաեւ հիմնադրամի կայքէջում www.himnadram.org, ինչպես նաև «**Ազգ**» օրաթերթի www.azg.am կայքէջում

AZG NEW PDF.qxd 2/16/2010 11:08 PM Page 1



# Սամվել Նիկոյան. «Հայաստանը պետք է շարունակի նախաձեռնողական քաղաքականությունը»

Ազգային ժողովի փոխնախագահ **Սամվել Նիկոյանը** երեկ «Փաստարկ» ակումբում խոսել է հայ-թուրքական հարաբերությունների ներկա պահի մասին: Ըստ նրա՝ Հայաստանը պետք է շարունակի իր նախաձեռնողական քաղաքականությունը, հայ-թուրքական Արձանագրությունները քննարկի ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովում եւ չպետք է սպասի Թուրքիայի քայլին: Բացի սրանից՝ անգամ վավերացման երկու սցենար եւս նկարագրեց. ա) վավերացումները երկու երկրների խորհրդարաններում միաժամանակ կատարվեն (սա թեեւ այնքան էլ հավանական չհամարեց), բ) Հայաստանը սպասի, մինչեւ Թուրքիայում Արձանագրությունները վավերացվեն: Նիկոյանը կարծում է, որ մենք Թուրքիային փաստորեն հնարավորություն ենք տալիս, որ աշխարհին ապացուցի, թե եվրոպական արժեքներ դավանող երկիր է եւ անկեղծորեն ուզում է այդ արժեքների մաս կազմել:



Մեկ օր առաջ Ս. Նիկոյանն «**Ազգին**» ասել էր եւ երեկ էլ կրկնել է, որ եթե Թուրքիան վավերացնի Արձանագրությունները, ապա խորհրդարանի քաղաքական մեծամասնությունը վճռական է վավերացման հարցում ու շատ նորմալ է, որ քաղաքական մեծամասնությունը պաշտպանում է իր ղեկավարին: Իսկ Թուրքիան, որ հայտարարում է, թե չի կարող ազդել իր խորհրդարանի վրա, կարող է եւ տապալել Արձանագրությունները:

Ազգային ժողովի փոխնախագահ, հանրապետական Սամվել Նիկոյանի համոզմամբ, Հայաստանը պետք է շարունակի իր նախաձեռնողական քաղաքականությունը նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման Արձանագրությունների վավերացման հարցում: Ս. Նիկոյանն անընդունելի է համարում Արձանագրությունների վավերացման ժամկետ նշելը, ասենք՝ մարտ, ապրիլ. «Եթե համոզված լինենք, որ դա տեղի է ունենալու մայիսին, ի՞նչ է, պետք է հրաժարվե՞նք: Մենք պետք է հետեւենք գործընթացներին՝ նայելով, թե դրակա՞ն ուղղությամբ են զարգանում, լճացե՞լ են, հետընթա՞ց են ապրում: Կախված դրանից՝ ողջամիտ ժամկետը կարող է տարբեր ընկալում ունենալ: Այն պետք է համահունչ լինի միջազգային հանրության ընկալումներին», ասել է ԱԺ փոխնախագահը:

Ս. Խ.

# Վարկեր են ստացել մոտ 1000 գյուղացիական եւ գյուղմթերքներ արտադրող տնտեսություններ

Գյուղական ֆինանսավորման կառույց (ԳՖԿ) ծրագրի իրագործման գրասենյակը ստեղծվել է 2005-ին ֆինանսների նախարարության համակարգում, նպատակ ունենալով կառավարել Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի 8,9 մլն դոլար արժողությամբ գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիրը եւ 5,2 մլն դոլար արժողությամբ գյուղական ձեռնարկատիրության եւ փոքրածավալ առեւտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիրը: Հետագայում ԳՖԿ-ն սկսեց իրականացնել նաեւ «Հազարամյակի մարտահրավերներ-Հայաստան» 8,5 մլն դոլար եւ Համաշխարհային բանկի 5,2 մլն դոլար արժողությամբ ծրագրերը:

Անցած 4 տարիներին ԳՖԿ-ի միջոցով վարկեր են ստացել մոտ 1000 գյուղացիական եւ գյուղմթերքներ արտադրող տնտեսություններ: Այս տեղեկությունները ծրագրերի իրականացման ավարտի կապակցությամբ մեզ հայտնեց ԳՖԿ-ի տնօրեն **Արա Մուրադյանը**: Վարկեր են ստացել բոլոր մարզերի գյուղացիական տնտեսություններն ու գյուղմթերքներ վերամշակողները: Ըստ ոլորտների, առավել շատ վարկեր են ստացել անասնապահական մթերք արտադրողները, ապա կաթնամթերք վերամշակողները, այգեգործական, պտուղ-բանջարեղեն վերամշակող ձեռնարկությունները: ԳՖԿ-ի տնօրենն առանձնացրեց վարկառուների մեջ ջերմոցային եւ ձկնաբուծական տնտեսությունների բաժնի ավելացումը, ասելով, որ այս ոլորտներն արտահանման մեծ ներուժ ունեն: Սակայն կան նաեւ բազմաթիվ խնդիրներ արտադրանքի ստանդարտները եվրոպականի հետ համապատասխանեցնելու առումով: Արա Մուրադյանն այն կարծիքը հայտնեց, որ ջերմոցային բուսաբուծությունն ու ձկնաբուծությունը շուտով կդառնան ԳՖԿ-ի ֆինանսավորման գերակա ուղղությունները:

Խոսելով ծրագրի արդյունավետության մասին, ԳՖԿ-ի տնօրենը տեղեկացրեց, որ այդ նպատակով գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի Հռոմի գրասենյակը երեք երկրներում՝ Հայաստանում, Մակեդոնիայում եւ Մոլդովայում իրականացվող ծրագրերի համեմատական հետազոտություններ է անցկացրել: Ըստ այդ հետազոտությունների՝ թեեւ Հայաստանի ծրագիրը մյուս երկու երկրների ծրագրերի համեմատ «երիտասարդ» է, բայց, Արա Մուրադյանի հավաստմամբ, արդյունավետությամբ հավասար է Մակեդոնիայի եւ Մոլդովայի ծրագրերին:

Ա. Ս.

# Դատարանը մերժեց «Ռադիո Հայ»-ի հայցադիմումը

Ավան եւ Նոր Նորք վարչական տարածքի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է «Ռադիո Հայ»-ի հայցադիմումն ընդդեմ Ազգային Ժողովի «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Ստեփան Սաֆարյանի: Դատական վեճի պատճառ էր եղել ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ ռադիոկայանի կազմակերպած հրապարակային քննարկումը, որը հետագայում վերածվել էր բանավեճի՝ բաց նամակների եւ հոդվածների տեսքով:

Սաֆարյանը հայտարարել էր, որ եթեր հեռարձակվող «Հայկական անդրադարձ» ծրագիրը նախագահականից իջեցված պատվեր է: Կրքերն այնքան թեժացան, որ բանավեճը տեղափոխվեց դատարան: Ռադիոկայանը դատարանին խնդրել էր պարտադրել ԱԺ պատգամավորին՝ հերքել այդ ապատեղեկատվությունը: Սակայն դատարանը վճռել էր, որ «Ռադիո Հայ»-ի պահանջն անհիմն է:

Հ. Հ.

# Մի ձեռքով ստորագրում են, մյուսով՝ խախտում

*1-ին էջից*

Եթե ֆորումներին հետեւեք, ապա Հայաստան ժամանած օտարերկրացիները գոհ են հայերի հյուրասիրությունից, մշակույթից, բայց բոլորը նշում են հանրապետության աղտոտվածության մասին ու խորհուրդ տալիս մաքրել երկիրը»:

Աշխարհի շատ երկրների օրինակով Հայաստանն էլ վերցնում է մի շարք պարտավորություններ, ընդգրկվում տարբեր կազմակերպություններում, ստեղծում համապատասխան կառույցներ, բայց բնության մեջ դրական փոփոխություններ չեն կատարվում: Դանիելյանը մտահոգված է, որ «Կանաչ էկոնոմիկա» գաղափարն իր նպատակին չի ծառայի, եւ «կանաչը» կմնա միայն իբրեւ գաղափարախոսության վերնագիր: Մինչդեռ պետք է ստեղծվեն չափանիշներ, որոնք կլուծեն կենսաբազմազանության հետ կապված հարցեր:

Ի տարբերություն բազմաթիվ երկրների, Հայաստանում բնապահպանության վերաբերյալ չկա համալիր մշակված ծրագիր: Կրթական համակարգում, հատկապես համալսարաններում բնապահպանության վերաբերյալ մոտեցումները կաղում են:

Կարինե Դանիելյանն ուշադրություն է հրավիրում հատկապես անտառների վիճակին ու Սեւանի հիմնախնդրին, որոնք քննարկվելու են «1000-ամյակի նպատակներ» ծրագրում: Նա նկատում է, որ Երեւանում իրականացված քաղաքաշինությունը խախտում է բնապահպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիայի բազմաթիվ կետեր: «Մի ձեռքով ստորագրում են, մյուսով՝ խախտում»:

Թեպետ Դանիելյանի ղեկավարած կազմակերպությունը արգելոցների խնդիրները չի ուսումնասիրում, սակայն պատկառելի կազմակերպությունների ուսումնասիրությունների հիման վրա նշում է, որ արգելավայրերը ֆորմալ բնույթ են կրում: «Կան փաստեր, երբ ուղղաթիռով արգելավայրերում որս են կատարել»: Թե ինչու նրանք աղմուկ չբարձրացրին, երբ Ջերմուկում ծառահատումներ էին ընթանում ճոպանուղի կառուցելու համար, Դանիելյանը պատմում է, որ բազմաթիվ զանգեր է ստացել: «Երբ խնդրով դիմեցինք, մեզ պատասխանեցին, որ միակ ճանապարհը դա է: Մենք էլ հավատացինք ու մեծ աղմուկ չբարձրացրինք, հետո պարզվեց, որ այլ ելքեր կային: Կողքերը կային լանջեր, որոնք անտառածածկ չէին, ու կարող էին դրանք օգտագործել: Երեւի մեր մեղավորությունն է, որ հավատացինք ու աղմուկ չբարձրացրինք»:

**ԳՅՈՒՄՐԻ**

# «Փոքրիկ իշխան» սոցիալական կենտրոն երեխաների համար

**Գյումրու «Անի» թաղամասում, Սախարովի հրապարակի տարածքում, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ծրագրով բացվեց «Փոքրիկ իշխան» գեղեցիկ անվամբ սոցիալական կենտրոն երեխաների համար: Ծրագրի նպատակը դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների եւ նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանությունն է՝ առանց ծնողական խնամքի մնացած փոքրիկների ու դեռահասների սոցիալական ինտեգրումը, ընտանիքներին իրենց շահերը պաշտպանելու գիտելիքների եւ հմտությունների հաղորդումը, համայնքի եւ դպրոցների, այլ գործընկերների հետ այս ոլորտում ընդհանուր դիրքորոշումների զարգացումն ու համագործակցությունը:**

**Կենտրոնը սոցիալական, հոգեբանական, իրավաբանական աջակցություն կցուցաբերի առանց ծնողական խնամքի մնացած 70 երեխաների, կտրամադրի խորհրդատվություն նաեւ ընտանիքի խնդիրների լուծման հարցերում: Կկազմակերպվեն համակարգչային, լրագրական գործի, դիզայներության, կարուձեւի, խոհարարության ուսուցում եւ մարզական խմբակի պարապմունքներ, տարբեր մասնագիտական դասընթացներ նաեւ ծնողների համար, համայնքի եւ դպրոցների հետ համատեղ միջոցառումներ: Շահառուներին կտրամադրվի նաեւ նյութական աջակցություն (հագուստ, գրենական պիտույքներ, հիգիենիկ պարագաներ):**

**Ծրագիրը ֆինանսավորվել է «Գերմանական Կարիտասի» եւ Գերմանիայի տնտեսական համագործակցության ու զարգացման նախարարության կողմից: «Փոքրիկ իշխան» կենտրոնի բացմանը ներկա էր Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Հանս-Յոխեն Շմիդթը:**

Գ. Մ.

# Կայացել է բնակարանների վիճակահանության երկրորդ փուլը

**Մինչ Գյումրու «Մուշ-2» թաղամասում շարունակվում են երկրաշարժից անօթեւան ընտանիքների համար բնակարանների կառուցման եւ անցած դեկտեմբերին հանրապետության նախագահի կողմից նկատված շինարարական թերությունների վերացման աշխատանքները, իր աշխատանքն է շարունակում նաեւ բնակբաշխման հանրապետական հանձնաժողովը: Ինչպես տեղեկացվել է, այս անգամ ընտրվել է շահառու ընտանիքների բնակարանների համարները այդ ընտանիքների ներկայացուցիչների միջոցով, հրապարակային վիճակահանությամբ որոշելու պրակտիկան, որն ընդհանուր հավանության է արժանացել:**

**Օրերս Գյումրու Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում կայացել է, ըստ մարզպետարանի տեղեկությունների, թվով 194 անօթեւան ընտանիքների բնակարանների վիճակահանության երկրորդ փուլը: Ինչպես եւ նախորդ անգամ, վիճակահանությանը մասնակցել են ՀՀ քաղաքաշինության նախարար, հանձնաժողովի նախագահ Վարդան Վարդանյանը, Շիրակի փոխմարզպետը, Գյումրու քաղաքապետը, այլ պատասխանատուներ:**

Գ. Մ.

# Թուրքերը, «Եվրոտեսիլն» ու... Հայոց ցեղասպանությունը

*1-ին էջից*

**Թուրք կոմպոզիտորի երեւակայությունը հասնում է այնտեղ, որ վերլուծելով երգի երկրորդ քառատողը՝ «Ծիրանի կորիզ բռիս մեջ պահած, հայրենի երկրից ես քեզ կդնեմ, նվեր ինձ տրված, ես քեզ կդնեմ, պահած հողի մեջ, որ դու վերսկսես քո պտույտն անվերջ», հայտարարում է, որ երգչուհին երգում է պատմական Հայաստանի մասին:**

**Վերջում կոմպոզիտորը «Եվրոտեսիլ» մրցույթ-փառատոնի կազմակերպիչներին առաջարկում է ուշադրություն դարձնել Հայաստանի ներկայացուցչի երգին ու թույլ չտալ Հայաստանին մասնակցել փառատոնին այդ երգով: Այս վարմունքը փաստում է, որ Թուրքիայում վախենում են հայոց ցեղասպանությունից ու պատմական ճշմարտություն տեսնում անգամ այնտեղ, որտեղ այն չկա: Գուցե թուրքերը նաեւ վախենու՞մ են, որ «Եվրոտեսիլի» փառատոնի ժամանակ հերթական անգամ Հայաստանը Թուրքիայի հեռուստադիտողներից կստանա բարձրագույն 12 միավոր:**

**«Ազգ»-ի հետ առանձնազրույցում Եվա Ռիվասի հասարակայնության հետ կապերի պատասխանատու Հայկ Մարկոսյանն ասաց, որ այդ կերպ թուրքերը գովազդում են Հայաստանի երգը: «Երգը ներկայացնում է հայկական մշակույթը, հայկական ավանդույթները, երիտասարդ աղջկա խոհերն են, որ տարիներ շարունակ ապրել է Հայաստանից դուրս: Երգը Հայոց ցեղասպանության հետ որեւէ կապ չունի ու քաղաքական ենթատեքստ չի պարունակում»:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 2/16/2010 10:17 PM Page 1



ՀԱՄԱՏԵՂ

# Մինսկի խմբին առաջարկները դեռ ներկայացվում են

*1-ին էջից*

Արտգործնախարարությունում **Կանատ Սաուդաբաեւը** հանդիպեց Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանին**, ապա նրանք համատեղ ասուլիսի էին, որ ավելի շատ հայտարարությունների հարթակ էր հիշեցնում, ինչպես եւ, հանուն արդարության պետք է նշել, հաճախ է պատահում ե՛ւ արտաքին գերատեսչության պատերից ներս, ե՛ւ նախագահական նստավայրի: Այստեղ համատեղ կոչվող ասուլիսներում, ամենահիմնավոր համարվող ժամանակային սղության պատճառաբանությամբ, հաճախ հարցեր տալու ու պատասխաններ ստանալու հնարավորություն չի տրվում:

Ինչեւէ, երեկ ԱԳՆ-ում Էդվարդ Նալբանդյանն ասուլիսում ողջունեց ԵԱՀԿ գործող նախագահին, հայտարարելով, որ Հայաստանն ու Ղազախստանը կապված են պատմությամբ ստուգված երկարամյա բարեկամությամբ, որը զարգանում է նաեւ ներկայում: Նրա խոսքերով, Հայաստանն ու Ղազախստանը բեղուն համագործակցում են տարբեր միջազգային կազմակերպություններում, մասնավորապես ՀԱՊԿ շրջանակներում:

Նալբանդյանն ընդգծեց, որ Հայաստանն աջակցել է Ղազախստանի թեկնածությանը ԵԱՀԿ նախագահի պաշտոնում եւ այնուհետեւ էլ մտադիր է աջակցություն ցուցաբերել Կանատ Սաուդաբաեւին ԵԱՀԿ-ում նրա նախաձեռնությունների ժամանակ: Ի դեպ, Ղազախստանի թեկնածությանն իրենց աջակցության մասին հաճախակի նշվել է նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի՝ փետրվարի 14-15-ին Բաքու կատարած այցելության ժամանակ:

Ի պատասխան Ղազախստանի լրատվամիջոցներից մեկի լրագրողի հարցին, թե Ղազախստանն արդյոք հետամո՞ւտ է լինելու ԵԱՀԿ գագաթաժողով անցկացնելու իր նախաձեռնությանը, Կանատ Սաուդաբաեւն ասաց, որ այդ գագաթաժողովի անցկացման անհրաժեշտությունը հասունացել է: «Ստամբուլում 1999-ի ԵԱՀԿ գագաթաժողովից շատ ժամանակ է անցել, աշխարհում շատ բան է փոխվել, նոր մարտահրավերներ, թեժ կետեր, խնդիրներ եւ հարցեր են առաջացել, որոնք պետք է քննարկել», ասաց Ղազախստանի արտաքին գերատեսչության ղեկավարը:

Ղազախստանը սկսել է ԵԱՀԿ գագաթաժողովի օրակարգի ու դրա անցկացման ժամկետների քննարկումը: «Գագաթաժողովի անցկացման գաղափարը պաշտպանել են գրեթե բոլոր երկրները», ասաց նա: ԵԱՀԿ անդամ պետությունների ղեկավարների քննարկման առարկա են դառնալու այնպիսի հարցեր, ինչպիսիք են տրանսատլանտյան ու եվրոպական միասնական անվտանգության ճարտարապետության կառուցման վերաբերյալ երկխոսության շարունակությունը, Աֆղանստանի հարցը, որը շարունակում է մնալ միջազգային ահաբեկչության եւ թմրանյութերի մատակարարման աղբյուր:

Այս առնչությամբ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն էլ հավելեց, որ պաշտոնական Երեւանը ողջունում է ԵԱՀԿ գագաթաժողովի անցկացման գաղափարը, ինչպես նաեւ Աստանայում այս տարվա հունիսին արտգործնախարարների ոչ պաշտոնական խորհրդակցությունների անցկացման մտադրությունը: Ամենայն հավանականությամբ, տարեվերջին նախատեսվող գագաթաժողովի օրակարգը կքննարկվի այդ ոչ պաշտոնական խորհրդակցությունների ժամանակ:

Խնդրանքին՝ մեկնաբանել Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի վերջին հայտարարությունը, թե Բաքվի համար ընդունելի են մադրիդյան նորացված սկզբունքները, Էդվարդ Նալբանդյանը նախ պատասխանեց, որ նույն Բաքուն 2007-ի դեկտեմբերին Մադրիդում ներկայացված հիմնարար սկզբունքների փաստաթուղթը չէր ընդունում, ավելին, հերքում էր դրա գոյությունը: «Այժմ կողմերից յուրաքանչյուրը ներկայացնում է իր առաջարկությունները Մինսկի խմբի աշխատանքային առաջարկների վերաբերյալ: Երբ Ադրբեջանը ներկայացնի իր առաջարկները, մենք կքննարկենք», հայտարարեց Նալբանդյանը:

# Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը պետք է նայել միջազգային իրավունքի դաշտում

## *Ասել է ԼՂՀ նախագահը ԵԱՀԿ նախագահողին*

Տարածաշրջան ժամանած ԵԱՀԿ գործող նախագահ Ղազախստանի արտաքին գործերի նախարար Կանատ Սաուդաբաեւը երեկ հանդիպումներ ունեցավ Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանությունների հետ: Նախօրեին նա Բաքվում արդեն հանդիպել էր Ադրբեջանի քաղաքական վերնախավին, այդ հանդիպումներին «**Ազգը**» անդրադարձել է երեկվա համարում:

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպումից եւ համատեղ ասուլիսից հետո Սաուդաբաեւը հանդիպեց նաեւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին: Հանդիպումից հետո ասուլիս տվեց միայն Լեռնային Ղարաբաղի նախագահը: «Ես ԵԱՀԿ գործող նախագահին շեշտել եմ, որ պետք է Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը նայել միջազգային իրավունքի դաշտում, որը շատ ավելի արդյունավետ կլինի հակամարտության լուծման համար», ընդգծեց Սահակյանը: Բացի դրանից, ԼՂՀ նախագահը տեղեկացրեց, որ հանդիպման ընթացքում ղարաբաղյան կողմը հստակ նշել է, թե առանց Ղարաբաղի դիրքորոշման անհնար է որեւէ առաջընթաց գրանցել, ավելին՝ քննարկել ու հաստատել որեւէ փաստաթուղթ: «Մադրիդյան սկզբունքների հին տարբերակն էլ, այս նորացված տարբերակն էլ չեն քննարկվել ԼՂՀ մասնակցությամբ, հետեւաբար դա չի կարող որոշիչ լինել մեզ համար, սրա մասին ես տեղեկացրել եմ Սաուդաբաեւին», նշեց ԼՂՀ նախագահը՝ հավելելով, որ չնայած իրենք չեն մասնակցել մադրիդյան սկզբունքների ոչ ստեղծմանը, ոչ էլ քննարկմանը, բայց, անշուշտ, ծանոթ են դրա բոլոր դրույթներին: «Եվս մեկ անգամ եմ կրկնում, Սաուդաբաեւին մենք հստակ տեղեկացրել ենք, առանց Ղարաբաղի դիրքորոշման անհնար է որեւէ փաստաթղթի ընդունումը», շեշտեց Բակո Սահակյանը:



«**Ազգի**» հարցին, թե ինչո՞ւ ԵԱՀԿ գործող նախագահը Ղարաբաղի դիրքորոշմանը ծանոթանալու համար չի այցելում հենց Ստեփանակերտ, ԼՂՀ նախագահը պատասխանեց. «Մենք նաեւ այդ հարցն ենք քննարկել, անհրաժեշտ է, որ ԵԱՀԿ կամ միջազգային այլ կազմակերպությունների ղեկավարները մեր դիրքորոշմանը ծանոթանալու համար լինեն հենց Ղարաբաղում, հակառակ պարագայում շատ անորոշ է ստացվում, միջնորդները գալիս են տարածաշրջան, բայց չեն լինում հակամարտության հենց կենտրոնում»:

Սահակյան-Սաուդաբաեւ հանդիպման ընթացքում քննարկվել է նաեւ Բաքվի հաճախակի դարձած ռազմական կոչերի ու հայտարարությունների հարցը: Ըստ ԼՂՀ նախագահի, ինքը Սաուդաբաեւին ասել է, որ միջազգային կազմակերպությունները, իրենց մանդատների համապատասխան, չեն ստիպում Ադրբեջանին՝ վերջ տալ դրանք եւ դրսեւորել վերջապես կառուցողական մոտեցումներ. «Ես շեշտեցի, որ Բաքվի այդ կոչերը ահաբեկչության նոր ձեւ են», նշեց Սահակյանը:

Հայ-թուրքական գործընթացները նույնպես դուրս չեն մնացել կողմերի քննարկումից: Հանդիպման ընթացքում շեշտվել է, որ այդ հարցը ոչ մի կապ չունի եւ չի էլ կարող ունենալ Ղարաբաղի հակամարտության հետ:

Ի դեպ, Սահակյան-Սաուդաբաեւ հանդիպումը նախատեսվածից մի քիչ ուշ սկսվեց: Պատճառը ԵԱՀԿ-ի նախաձեռնությունն էր՝ հանդիպել Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Լրագրողների համար անհայտ մնաց՝ Սաուդաբաեւը խնդրել էր հանդիպել Տեր-Պետրոսյանի հետ որպես ՀՀ առաջին նախագահի՞, թե՞ որպես Հայաստանի ընդդիմության առաջնորդի: Համենայն դեպս, հանդիպմանը ներկա ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանը նշեց, որ նախ հանդիպման նախաձեռնությունը ԵԱՀԿ-ինն է եղել, ապա ավելացրեց. «Հանդիպման ընթացքում մենք ԵԱՀԿ-ին ներկայացրեցինք մեր դիրքորոշումները ինչպես Ղարաբաղի հակամարտության, այնպես էլ հայ-թուրքական գործընթացների կապակցությամբ: Սակայն մենք հիմնականում անդրադարձանք Հայաստանում դեմոկրատիայի ու մարդու իրավունքների պահպանման մակարդակին: Մեր կարծիքով՝ ԵԱՀԿ-ը երբեք արժանի գնահատականներ չի տվել այս ուղղությամբ: Մենք ներկայացրինք մեր դիրքորոշումները, եւ հիմա միայն ժամանակը ցույց կտա, թե ինչպե՞ս դրանք կընդունի ԵԱՀԿ-ը: Ես կարծում եմ, որ ինչ-որ բան կփոխվի»:

Սակայն թե ի՞նչ դիրքորոշումներ ունի Հայաստանի առաջին նախագահը կոնկրետ Ղարաբաղի հարցում եւ ի՞նչ է նա խոսել այդ թեմայով ԵԱՀԿ նախագահողի հետ, մնաց անհայտ:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Նույն երամի տղերքն իրարից նեղանալու իրավունք չունեն

*1-ին էջից*

Համագումարից հետո ասուլիսում ԵԿՄ նորընտիր նախագահ Մանվել Գրիգորյանը մի քանի պատասխան տվեց այն հարցերին, որոնք համագումարի դահլիճում էին նաեւ տրվում: Ինչո՞ւ չեն հրավիրվել Տեր-Պետրոսյանի կողմնակից երկրապահները. Մ. Գրիգորյանը պատասխանեց, որ ոչ ոքի էլ հատուկ չեն հրավիրել, եթե մեկն իրեն երկրապահ էր զգում, պետք է գար: Սեյրան Օհանյանը կոչ արեց համախմբվել նախագահ Սարգսյանի շուրջը. «Երկրապահը միշտ էլ համախմբված է եղել պետության, ժողովրդի շուրջը: Սերժ Սարգսյանն այսօրվա ՀՀ գերագույն գլխավոր հրամանատարն է, ուզեք-չուզեք, ով շատ է խոսում՝ որ չէ, իրեն հարցրեք, հրամանները ո՞նց են կատարում»: Ղարաբաղյան հարցի փոխզիջումային տարբերակի մասին այսօր շատ են խոսում. «Բայց ինչի՞ն փոխզիջենք, եթե որեւէ մեկը մեր ունի, քուր ունի՝ սրան-նրան փոխզիջելու, զիջենք, ինչի՞ մասին եք ասում, մարդիկ իրենց անկախությունը ձեռք են բերել, արյուն են թափել դրա համար...: Ես նման բաներն աբսուրդ եմ համարում»:

«**Ազգը**» հետաքրքրվեց պատերազմի հավանականությամբ.«Պատերազմն անկանխատեսելի երեւույթ է, կարող է լինել: Հավանականությունը ո՞րն է, եթե ուզում ենք պատերազմ չլինի՝ ավելորդ վիրավորանքներ իրար հասցեի պիտի չխոսենք, միասնական լինենք, ուժեղ լինենք՝ պատերազմ չի լինի, եթե ցեց ընկնի՝ պատերազմ մենք ինքներս ենք հրահրում, եթե չենք ուզում, ուրեմն պիտի ամուր ժողովուրդ լինենք, ամուր պետություն ստեղծենք... Ինքներս պիտի պատրաստ լինենք, որ պատերազմ չլինի: Լինելուց էլ՝ արդեն թող իրենք մտածեն»:

Իշխանական եւ ոչ իշխանական գեներալների մասին՝ մարտի 1-ի ենթատեքստում. «Դրանք զինվորականներ էին, որոնք պարտավոր էին հրաման կատարել, չկատարեին՝ ավելի վատ կլիներ իրենց կոչման համար: Միայն էս երկրում ես եմ խելառ եղել, որ հրաման չեմ կատարել: Երեք օր Ռոբերտ Քոչարյանը կանչել է՝ չեմ գնացել, ես եմ դիմում ուղարկել, որ ինձ ազատեն, իսկ մնացածը պարտավոր էին գնալ ու հրամանները կատարել: Էլ ի՞նչ զինվորական, որ հրամանը չկատարի»: Հարցին, թե էլ ինչ զինվորական, որ սեփական ժողովրդի վրա կրակելու հրահանգ պետք է կատարի, ասաց. «Եթե նման մեկը եղել է, ուրեմն ոչ լավ զինվորական է, ում որ հանկարծ կգտնեք՝ նա հետուառաջ պատասխան է տալու»: Ու ավելացրեց. «Եթե դուք մտածում եք՝ Երեւան քաղաքը Ֆիզուլի է կամ ուսումնական կենտրոն, որ էլնենք ծեծենք-ջարդենք, սխալվում եք: Երեւան քաղաքը Ֆիզուլի չէ»:

**Սասուն Միքայելյանի հարցը.** «Իր ազատության համար ինքը պիտի անի, իրենից բացի ոչ մեկն էլ ոչ մի բան չի կարող անել: Եթե որեւէ մեկը Սասունի նման Սերժ Սարգսյանին մոտիկ է եղել, ամոթ իմ ծծած կաթին. թող դիմի, իրար հետ խոսեն, ինչի են ուրիշներին դեմ տալիս, օրական ընկած, Թագուհի՛ (ՉԻ-ի թղթակցին), Ազգային ժողով, ստե-ընդե բզում-բրդում եք, ավելի էդ մարդուն խորտակում եք... Սասունն ինձ համար մարտական ընկեր է, էս երկրում զավլուժնի տղա է, օրինակ, եթե ինձանից կախված լիներ, ես նրան կազատեի, Սասունին չի կարելի բանտարկել: Քաղբանտարկյա՞լ... Ես Սասունին որպես քաղաքական գործչի չեմ ճանաչում, ես Սասունին որպես ազատամարտիկի գիտեմ, նա պահի տակ քաղաքական երեւույթի տակ հայտնվավ՝ ոչ ճիշտ տեղում, ոչ ճիշտ պահին: Չնայած դեպուտատ եղել է, կարողա...»:

**Մ. Գրիգորյանին ԼՂՀ պաշտպանության նախարար նշանակելու լուրերի մասին.** «Ասված ոչ անի, որ ինձ նշանակեն, ուրեմն պիտի պատերազմ լինի, որ ինձ նշանակեն, հլա որ վստահ ենք, որ պատերազմ չի լինի»: Տարածք հանձնողին առնվազն «դավաճան» անվանեց:

Նկատեցի՞ք՝ պահպանեցինք Մանվել Գրիգորյանի խոսքի կոլորիտը: Իսկ այժմ՝ Արամ Սարգսյանի վերաբերյալ մեր խոստացածը: ԵԿՄ համագումարի վերաբերյալ **Արամ Սարգսյանը** լրագրողներին ասաց. «Ես ուզում եմ, որ այս կառույցը գոնե առաջիկա տարիներին, գոնե մինչեւ ղարաբաղյան հիմնահարցի լուծումն այս կառույցը մնա»: Սերժ Սարգսյանի շուրջը միավորվելու Սեյրան Օհանյանի կոչին արձագանքեց այսպես. «Գիտե՞ք ինչ, ես այդ հարցին պատասխանեցի, երբ ասացի՝ երկրապահը չի կարող տարանջատ լինել բանակից, որովհետեւ Երկրապահ կամավորականների միությունը հենց Վազգեն Սարգսյանի ժամանակ ստեղծվելով՝ իր առաջ դրած երեք խնդիրների հիմքով էլ շփվում է բանակի հետ, եւ էս առումով դրական եմ տեսնում երկրապահ եւ բանակ սառած սառույցի մի քիչ մեղմացումը, իսկապես դրական եմ տեսնում: Եթե, օրինակ, նայեիք էն թվաբանությանը, թե ի՞նչ գումարներ են ծախսվել ու ի՞նչ խնդիրների վրա՝ կտեսնեք, որ էդ գումարները որոշակի տեղեր, որոշակի մարդկանց հասել են, չկա ուրիշ կառույց, որը փորձեր էդ խնդիրներն աներ: Եվ եթե էս համագումարով եւս մի 10 երկրապահի ընտանիքի ձեռք մեկնված լինի, էդ պրոբլեմները (նորից բարձրացված այս համագումարում) հասարակության շնչառությանը կհասնեն, իրենք մեծ խնդիր լուծած կլինեն...ես կողմնակից եմ եղածն ավելացնելու, ոչ թե գալու, ուրելու, գնալու»: Համագումար չեկած ընդդիմադիր երկրապահների մասով էլ նկատեց. «Ես գտնում եմ, որ նրանք իրար հետ լեզու գտնելու հնարավորություն դեռ ունեն, իմ մասով, եւ Վազգենի եղբայր որպես՝ պարտավորված եմ զգում այդ խնդիրը հարթելու, ոչ թե ուրելու... ես այստեղ ընդդիմադիր չեմ, ես այստեղ երկրապահ եմ, որ էս կառույցի համար սրտով ցավ է ապրում: Ամենամեծ դրաման էսօր ինձ է, որ իմ ընկերներն այստեղ չեն, եւ ոչ թե Ձերը (հարց տվող լրագրողներին էր ասում)»: «**Ազգի**» հարցին, թե հնարավոր համարո՞ւմ է պատերազմի վերսկսումը, Ա. Սարգսյանը պատասխանեց. «Իհարկե, հնարավոր համարում եմ, եթե «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» վիճակն է, պատերազմի հնարավորությունն ամեն վայրկյան է: Նաեւ ինքս ապրում եմ հենց սահմանի վրա, եւ հենց մեր տարածքում՝ Երասխում դիրքերի տեղաշարժերն անընդհատ են, եւ զորքերի կուտակումները, էնպես որ գտնում եմ, որ խրամատում իրար կողքի կանգնած նույն երամի տղերքը իրարից նեղանալու իրավունք էսօր չունեն»: Ահա այսպես դաս տվեց Արամ Զ. Սարգսյանը բոլոր երկրապահներին:

AZG NEW PDF.qxd  2/16/2010  10:18 PM  Page 1



# Անշարժ գույքի գների կայուն աճ 1 տոկոսի շրջակայքում

## *Արձանագրվել է Հայաստանի բնակարանների եւ անհատական տների առուվաճառքի գործարքներում 2009-ի դեկտեմբերին*

2009-ի դեկտեմբերին, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 17729 գործարք, ինչը 10,2 տոկոսով բարձր է 2009-ի նոյեմբերին կատարված գործարքների եւ 19,6 տոկոսով՝ 2008-ի դեկտեմբերին կատարվածների համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը դեկտեմբերին նոյեմբերի համեմատ աճել է 12,5 տոկոսով, իսկ անցյալ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 2,5 տոկոսով: 4574 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 84,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 30,7 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 63,3 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2009-ի նոյեմբերի համեմատ, բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում դեկտեմբերին աճել է 14 տոկոսով, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ աճել 34,8 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում դեկտեմբերին նոյեմբերի համեմատ աճել են՝ 1,4 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները դեկտեմբերին այսպիսին են եղել (աղ.1).

| *աղ.1* Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | դեկտեմբեր 2008 թ. | դեկտեմբեր 2009 թ. | նոյեմբեր 2009 թ. |
| Կենտրոն | 496300 | 472300 | 465600 |
| Արաբկիր | 392800 | 370800 | 366800 |
| Քանաքեռ-Զեյթուն | 296500 | 280900 | 277500 |
| Նոր Նորք | 265700 | 230500 | 227600 |
| Ավան | 264600 | 231800 | 229400 |
| Էրեբունի | 267200 | 245400 | 241100 |
| Շենգավիթ | 270300 | 245600 | 241800 |
| Դավթաշեն | 297200 | 265700 | 261300 |
| Աջափնյակ | 255000 | 234800 | 230700 |
| Մալաթիա-Սեբաստիա | 253600 | 233800 | 230100 |
| Նուբարաշեն | 152600 | 142200 | 142200 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 292000 | 268500 | 264900 |

Այսուհետեւ երեւում է, որ Երեւանի բոլոր վարչական շրջաններում էլ բնակարանների գների աճ է արձանագրվել:

Մարզերում, բացառությամբ Երեւանի, դեկտեմբերին վաճառվել են 424 բնակարաններ, որոնց քանակը նոյեմբերի համեմատ աճել է 23,6 տոկոսով, իսկ 2008-ի դեկտեմբերի համեմատ՝ 6,8 տոկոսով: Միաժամանակ, բնակարանների միջին գները նոյեմբերի համեմատ աճել են 1 տոկոսով:

Երեւանից հետո ամենաթանկ բնակարանները դեկտեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 181 հազար դրամ: Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ գինը կազմել է 157 հազար դրամ: Ապա գալիս են Աբովյանը՝ 155 հազար դրամ, Գորիսը՝ 140 հազար դրամ, Աշտարակը՝ 139 հազար դրամ, Իջեւանը՝ 135 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

Դեկտեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 472 գործարք, որից 135-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը նոյեմբերի համեմատ նվազել է 11,2 տոկոսով, իսկ մարզերում աճել՝ 13,9 տոկոսով: 2008-ի դեկտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 28,6 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 6,9 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2009-ի դեկտեմբերին նոյեմբերի համեմատ աճել են 1,2 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել (աղ.2).

Այս աղյուսակից նույնպես երեւում է, որ բոլոր վարչական շրջաններում անհատական տների գներն աճել են:

| *աղ. 2* Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | դեկտեմբեր 2008 թ. | դեկտեմբեր 2009 թ. | նոյեմբեր 2009 թ. |
| Կենտրոն | 510000 | 476600 | 471300 |
| Արաբկիր | 438700 | 374500 | 371500 |
| Քանաքեռ Զեյթուն | 325900 | 284500 | 280200 |
| Նորք Մարաշ | 314100 | 282000 | 279500 |
| Ավան | 291200 | 234800 | 234300 |
| Էրեբունի | 291400 | 247800 | 244200 |
| Շենգավիթ | 293900 | 247800 | 243800 |
| Դավթաշեն | 324500 | 270400 | 264600 |
| Աջափնյակ | 302400 | 237700 | 234400 |
| Մալաթիա-Սեբաստիա | 295700 | 236300 | 233000 |
| Նուբարաշեն | 172300 | 146400 | 147100 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 323600 | 276300 | 273100 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները դեկտեմբերին նոյեմբերի համեմատ աճել են 1,1 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո դարձյալ Ծաղկաձորում են, 1 քմ-ն՝ 299 հազար դրամ: Երկրորդը Վաղարշապատն է, 1 քմ-ն՝ 165 հազար դրամ, երրորդը՝ Աբովյանը, որտեղ 1 քմ-ն կազմել է 157 հազար դրամ: Ապա գալիս են Գորիսը՝ 143 հազար դրամ, Աշտարակը՝ 141 հազար դրամ, Նոր Հաճընը եւ Իջեւանը՝ 136 հազար դրամ, Եղվարդը՝ 127 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2009-ի դեկտեմբերին 2008-ի դեկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 41,6 տոկոսով: Ընդ որում, Երեւանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 71,4 տոկոսով:

Անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նոյեմբերին կազմել է 1327: Նոյեմբերի համեմատ այդ ցուցանիշը աճել է 26 տոկոսով, իսկ 2008-ի դեկտեմբերի համեմատ աճել 25,2 տոկոսով:

2009-ի դեկտեմբերին անշարժ գույքի իրականացված 2559 գրավադրման գործարքներից 194-ը եղել են հիպոթեկային գրավադրման գործարքները, որից 144-ը՝ Երեւանում: Հիպոթեկային գրավադրման գործարքներից 79,4 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 16,5 տոկոսն՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2009-ի նոյեմբերի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակը դեկտեմբերին աճել է 24,4 տոկոսով, ընդ որում՝ Երեւանում՝ 11,6 տոկոսով, մարզերում նվազել՝ 85,2 տոկոսով: 2008-ի դեկտեմբերի համեմատ հիպոթեկային գործարքներն աճել են 2,5 անգամ, Երեւանում՝ 2,4 անգամ, մարզերում՝ 2,9 անգամ:

Այսպիսով, 2009-ի վերջին ամսին տարվա կեսից սկսված անշարժ գույքի գների կայունացումն ու որոշակի վայրիվերումներով փոքր աճը փոխարինվեց արդեն կայուն աճի միտումով: 1 տոկոսից ավելի գների աճ է արձանագրվել ինչպես Երեւանի, այնպես էլ մարզերի բնակարանների ու անհատական տների շուկայում: Աճել է նաեւ գործարքների քանակը: Դեկտեմբեր ամսվա ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնել, որ անշարժ գույքի շուկան Հայաստանում վերակենդանանում է եւ վերսկսում զարգանալ: Չմոռանանք նշել, որ անշարժ գույքի շուկան ամենազգայուններն է արձագանքում տնտեսության մեջ նկատվող տեղաշարժերին: Միաժամանակ, անշարժ գույքի շուկայի զարգացման տեմպը դեռ շատ հեռու է 2003-2008-ին արձանագրված բուռն աճից:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Հայաստանում՝ ինչպես Իտալիայում

**Համեմատաբար մեղմ ձմեռը հայաստանաբնակների մի մասի մեջ տարօրինակ տրամադրություն առաջացրեց. բնակարանի ջեռուցման դիմաց խնայված գումարի հաշվին ամառային բանջարեղենի մի համեստ ճաշի գնումներ կատարել ու գեթ մեկ օրով մոռանալ ավանդական դարձած մակարոնեղենն ու կարտոֆիլը: Այս երազանքը հատկապես հնարավոր է դառնում երեւանյան սուպերմարկետների հայտարարած աննախադեպ գների իջեցումների ու զեղչերի մասին հայտարարությունների պարագայում, երբ թվում է, թե դրանց տերերը արդեն կշտացել են ու պատրաստ են մի փոքր էլ իրենց համերկրացի շարքային գնորդներին բավականություն պատճառել:**

**Ահա այս տրամադրությամբ մեր համեստ քաղաքացին իր մտադրությունն իրականացնելու նպատակով մտնում է իր գործունեությունը գովերգող սուպերմարկետներից մեկը՝ նկատի ունենալով գրպանում ունեցած 2000 դրամով ձեռք բերել ընտանիքի անդամներին բավարարող մեկանգամյա ճաշի համար պահանջվող ամառային բանջարեղենի տեսականին, որը հայաստանցիներս տարօրինակ անունով ենք կոչում՝ աջափսանդալ: Ցուցափեղկերի վրա դասավորված դդմիկներն ու սմբուկը, պղպեղն ու լոլիկը, կարտոֆիլն ու բրոկկոլին, սոխն ու սխտորն իրենց գրավիչ տեսքերով պայքարում են մեկը մյուսի դեմ, իրենց թեկնածությունն առաջարկում գնորդի տան կաթսայի մեջ հայտնվելու ու եփվելու համար: Այցելուն ձեռքն է վերցնում 2 փոքրիկ դդմիկներից կազմված գեղեցիկ փաթեթն ու նայում գնանշմանը. 650 գրամի համար հարկ է վճարել 1200 դրամ: Չէր խանգարի դրա հետ 2-3 սմբուկ էլ վերցնել, մի 300-400 գրամ, որի 1 կգ-ը 2000 դրամ արժե. չէ, 1-ն էլ է բավարար: Այն հաճախորդի գրպանից կտանի մի 400 դրամ: Տանը որոշված ճաշատեսակն առանց պղպեղի չի լինի, իսկ առավել ախորժելի համ կունենա տոմատի փոխարեն լոլիկով պատրաստված լինելու պարագայում: Ընդամենը 1 պղպեղն արժե 320 դրամ, որից գոնե 2 հատ նախատեսված ճաշատեսակի մեջ հարկ է կտրտված տեսնել: Գումարենք մի 2-3 լոլիկ, որի ձվաչափ հատը վաճառվում է մոտ 100 դրամով: Թերեւս 500 դրամի էլ սոխ, սխտոր ու կանաչի պահանջվեն, մի քանի պալար կարտոֆիլ, որի թարմ տեսակի 1 կգ-ը վաճառվում է 500 դրամով: 1 հատիկ կծու պղպեղն էլ չէր խանգարի, որը վաճառվում է 220 դրամով. դե, ինչպես չհիշես «ախորժակիդ քացախ» արտահայտությունը: Այնպես որ մեկ համեստ ճաշացուին անհրաժեշտ ամառային բանջարեղենի ընդհանուր գումարը անցավ 3000 դրամը, որը պարզապես անակնկալի բերեց րոպեներ առաջ համարձակության պակաս չունեցող մեր երազող շարքային քաղաքացուն:**




**Անկեղծ ասած, գուցե չգրեի այս մասին, եթե տեղյակ չլինեի հիշատակված բանջարեղենի գներին, ասենք, Ավստրիայում ու ԱՄՆ-ում, որոնց մի մասը ներկայացված է տպագրվող նկարների հավաքածուում: Մեր սուպերմարկետներում այս օրերին 1 կգ սոխը վաճառվում է 1 դոլարով, երբ Լոս Անջելեսի առեւտրի որեւէ կետում այս գումարով կարելի է գնել 4,5 կգ սոխ: Ավստրիայի Գրաց քաղաքում 2 պղպեղն է 60 ցենտ գնահատված, երբ մեզանում 1 պղպեղն է այս գնին: Թարմ կարտոֆիլի 1,4 կգ-ը ԱՄՆ-ում 99 ցենտ է, երբ մեզանում 1 կգ-ը 1,2 դոլարով է վաճառվում: Լոլիկի 900 գրամը Լոս Անջելեսում ընդամենը 1 դոլար է, երբ նույն քաշը Երեւանում գրեթե 4 դոլար է սահմանվել:**

**Ինչո՞ւ, պարոնայք մեր պարենային խնդիրները լուծելուն կոչված այրեր, մասնագետներ ու պետական պաշտոնյաներ: Այն բացատրությունները, թե դուք այսպես ու այսպես, իսկ բուն վաճառողներն այնպես ու այնպես, չի ընկալում շարքային քաղաքացին, քանզի նա համոզված է, որ այս ողջ գործընթացը փոխադարձ համաձայնեցված մի կուռ շղթա է: Իշխանավորն ինչո՞ւ չի քայլեր ձեռնարկում այս պարենամթերքների արտադրությունը երկրի փոքր ու միջին բիզնեսի շրջանակներում իրականացնելու հարցում, անհեթեթ պատճառաբանություններ բերելով դրանք դրսում ավելի մատչելի ձեռք բերելու հնարավորության մասին: Է, ում ինչ ենք ասում, ումից ինչ ենք ակնկալում. կարծես մեր հերոսի առավել տրամաբանված որոշումը մակարոնեղենի բաժին այցելելն է, ուր թեեւ արտերկրից ներկրված ալյուրից պատրաստված, սակայն տեղական անվանվող մատչելի արտադրանք կա: Իտալացիներն Աստծո ամեն օր սնվում են, չէ՞, այս սննդատեսակով... Տարբերությունը թերեւս այն է, որ հիշատակված երկրներում մեկժամյա աշխատանքի դիմաց նրանց վճարում են 15 դոլարից սկսվող աշխատավարձ, երբ հայ հանրության մի զգալի հատված կազմող կենսաթոշակառուին այդ գումարը տրվում է ամբողջ շաբաթ գոյատեւելու համար:**

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

AZG NEW PDF.qxd 2/16/2010 10:19 PM Page 1



# Թուրք-ամերիկյան գործընկերությունը՝ վտանգված

«Վտանգված գործընկերություն. թուրք-ամերիկյան հարաբերությունները աշխարհաքաղաքական գլոբալ փոփոխությունների դարաշրջանում»: Սա ամերիկյան հեղինակավոր վերլուծական կենտրոններից մեկի՝ RAND կորպորացիայի, Վաշինգտոնում հրապարակված ծավալուն մենագրության վերնագիրն է: Շուրջ 150 էջ կազմող աշխատության մեծ մասը նվիրված է հայ-թուրքական հարաբերություններին եւ դրանցում ԱՄՆ դերակատարությանը: RAND-ի վերլուծաբանների համոզմամբ՝ Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը դրական երեւույթ է: Վերլուծաբաններն առանձնացնում են մի շարք կարեւոր փաստեր, որոնք ձեռնտու կլինեն երկու երկրներին, եթե սահմանը բացվի: Հայաստանի համար երկկողմ հարաբերությունների բարելավումը կնշանակի տնտեսական եւ քաղաքական կախվածության թուլացում Մոսկվայից: «Հայաստանը կարող է ընդգրկվել տարածաշրջանային տնտեսական եւ էներգետիկ այն ծրագրերում, որոնցից դուրս է մնացել: Իսկ Թուրքիայի համար Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը կարող է նոր լիցք դառնալ Եվրոմիությանն անդամակցելու ճանապարհին»: Վերլուծաբանները չեն շտապում իրականություն համարել հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը: «Երկու երկրների մերձեցումը որոշակի լարվածություն է ստեղծել Ադրբեջանի եւ Թուրքիայի հարաբերություններում: Բաքվում մտավախություն կա, որ Անկարայի եւ Երեւանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման դեպքում ադրբեջանական կողմը Հայաստանի վրա ազդեցության կարեւոր մի լծակ է կորցնելու»:

RAND-ի փորձագետները, անդրադառնալով ղարաբաղյան խնդրի կարգավորման շաղկապմանը հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացին, գրում են: «Մեծ է հավանականությունը, որ այդ քայլը կդժվարացնի Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների բարելավման գործընթացը»: Ամերիկացի վերլուծաբանները գործընթացին խոչընդոտող եւս մեկ գործոն են ներկայացնում՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին ԱՄՆ Կոնգրեսում շրջանառության մեջ գտնվող բանաձեւի նախագիծը: «Բանաձեւի ընդունումը կարող է լրջորեն վնասել Օբամայի վարչակազմի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների ամրապնդման ջանքերը: Բանաձեւի ընդունման դեպքում Անկարան կարող է պատասխան քայլերի դիմել՝ որոշակիորեն սահմանափակելով ամերիկացիների՝ Թուրքիայի տարածքում գտնվող ենթակառույցներից օգտվելու հնարավորությունները»:

Նրանց համոզմամբ՝ ցեղասպանության բանաձեւի ընդունման հավանականությունը կաճի, եթե Թուրքիայում պաշտոնական Վաշինգտոնի համար անցանկալի ներքին զարգացումներ լինեն: Վերլուծաբաններն առաջնահերթ նկատի ունեն ռազմական նոր հեղաշրջումը: «Եթե զինվորականները կրկին միջամտեն քաղաքական զարգացումներին, ապա ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունման հավանականությունը մեծ կլինի: Բացի այդ, Կոնգրեսը կարող է պատժամիջոցներ կիրառել Թուրքիայի դեմ՝ արգելելով զենքի վաճառքն այդ պետությանը»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՄՆ-ը Սեւ ծովում հակահրթիռային համակարգի տարրեր չի տեղադրի

Միացյալ Նահանգները մտադիր չէ հակահրթիռային պաշտպանության համակարգի տարրեր տեղաբաշխել Սեւ ծովում: Այդ մասին երեկ հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարի սպառազինությունների վերահսկման եւ միջազգային անվտանգության գծով տեղակալ **Էլեն Թոշերը**:

Նրա խոսքերով, Վաշինգտոնը չի պատրաստվում Սեւ ծով ուղարկել Aegis համակարգով հանդերձավորված էսկադրային ականակիրներ: Եվրոպայում ստեղծվող հակահրթիռային պաշտպանության համակարգչի շրջանակներում ԱՄՆ-ը ուզում է օգտագործել ծովային բազավորման կալանիչների 8 մարտկոց, որոնցում կլինի SM-3 տիպի 64 կալանիչ հրթիռ, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Թոշերը չի մանրամասնել, թե որտեղ են տեղաբաշխվելու Aegis համակարգով հանդերձավորված ամերիկյան ռազմանավերը: Միայն ասել է, որ դրանք 2011 թվականին կլինեն Միջերկրական ծովում: Մինչդեռ հակահրթիռային համակարգի նորացված ծրագրով (որը նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը հրապարակեց 2009-ի սեպտեմբերին) նախատեսվում է ամերիկյան ռազմանավերի պարտեկություն իրականացնել նաեւ Հյուսիսային ծովում: Տվյալ կետի կապակցությամբ Էլեն Թոշերը, սակայն, ոչինչ չի ասել:

«Մենք վերստին կրկնում ենք, որ այդ համակարգը բնավ ուղղված չէ Ռուսաստանի դեմ: Իրականում մենք կուզենայինք, որ Ռուսաստանը մեր գործընկերը լիներ Եվրոպայում տվյալ համակարգի ստեղծման մեջ», ընդգծել է ԱՄՆ պետքարտուղարի տեղակալը:

# Արգելվեց մի շարք բելառուս պաշտոնյաների մուտքը Լեհաստան

Լեհաստանի իշխանությունները արգելել են մուտքի այցագիր տալ մի շարք բելառուս պաշտոնյաների: Վարշավան այդպես է պատասխանում չճանաչված «Բելառուսի լեհերի միության» նկատմամբ Մինսկի իշխանությունների գործողություններին: Այդ մասին հաղորդում է «Խարտիա-97» կայքէջը:

Անցանկալի անձինք հայտարարված բելառուս պաշտոնյաների անունները առայժմ չեն հրապարակվում: Արգելքը ուժի մեջ է մտել փետրվարի 16-ի գիշերը:

2010-ի սկզբներին Մինսկի մարզի Իվենեց քաղաքում սրվել էր հակամարտությունը լեհական համայնքի շենքի՝ Լեհական տան առնչությամբ: Փետրվարի 9-ին ոստիկանները եւ դատական պրիստավները շենքից վռնդել էին չճանաչված «Լեհերի միության» ակտիվիստներին եւ սկսել էին գույքագրում անցկացնել: Դրա հետեւանքով շենքն անցել էր իշխանությունների աջակցությունը վայելող այլընտրական «Լեհերի միության» վերահսկողության տակ:

Միաժամանակ Մինսկի մարզի Վոլոժին քաղաքում սկսվել էր չճանաչված «Լեհերի միության» Իվենեցի բաժանմունքի ղեկավար Թերեզա Սոբոլի դատավարությունը: Նա ամբաստանվում է Լեհական տունը «զավթելու» մեջ: Սոբոլին աջակցելու մեկնած լեհ ակտիվիստներին կալանավորել էին: Ավելի ուշ ոմանց նշանակել էին վարչական կալանք, ուրիշներին՝ տուգանել էին:

Վարշավան անցյալում քանիցս դատապարտել էր լեհական համայնքի իրավունքների խախտումները: Վերջերս Բելառուսից հետ էր կանչվել Լեհաստանի դեսպանը, բայց շուտով նա վերադարձել էր Մինսկ:

«Բելառուսի լեհերի միությունը» պառակտվեց 2005-ին: Դրա՝ իշխանություններին հավատարիմ մասը պաշտոնապես ճանաչված է: Չճանաչված «Լեհերի միության» ակտիվիստները (Անժելա Բորիսի գլխավորությամբ) ենթակա են Բելառուսի ուժային կառույցների ճնշումներին:

# Իսրայել-Ուկրաինա այցագրային ռեժիմը կվերացվի

Իսրայելի կառավարությունը որոշել է վերացնել այցագրային ռեժիմը Ուկրաինայի քաղաքացիների համար: «Կոմերսանտ-Ուկրաինա» թերթը հաղորդում է, որ վարչապետ Բենիամին Նաթանյահուն Իսրայելի ԱԳՆ-ին հանձնարարել է բանակցել ուկրաինական կողմի հետ եւ քննարկել այցագրերի չեղարկման տեխնիկական ու իրավաբանական հանգամանքները:

Ուկրաինայի զբոսաշրջության գործակալությունների կանխատեսումների համաձայն, Իսրայել մեկնող ուկրաինացիների թիվն այսուհետեւ կավելանա, մինչդեռ ուղեգրերի արժեքը կմնա անփոփոխ:

Այցագրային ռեժիմի վերացման նախաձեռնողներն են Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը եւ զբոսաշրջության նախարար Ստաս Միսեժնիկովը: Ավելի վաղ՝ 2008-ի սեպտեմբերին, Լիբերմանի «Մեր տունն Իսրայելն է» կուսակցության ջանքերով անայցագիր ռեժիմ էր հաստատվել Իսրայել-Ռուսաստան հարաբերություններում: Այդ քայլի շնորհիվ ռուսաստանցի զբոսաշրջիկների թիվը կրկնապատկվել է: Այժմ որոշված է հաջող փորձը կիրառել նաեւ Ուկրաինայի նկատմամբ:

ՊԱԿԻՍՏԱՆԱԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐՈՎ

# Ձերբակալվել է պակիստանյան «Թալիբանի» երկրորդ դեմքը

Պակիստանում ձերբակալվել է «Թալիբան» շարժման ազդեցիկ անդամ Աբդուլ Ղանի Բարադարը, որը համարվում է շարժման երկրորդ դեմքը՝ դրա հիմնադիր եւ առաջնորդ մոլլա Մոհամմեդ Օմարից հետո:

«Նյու Յորք թայմս» թերթի տվյալներով, Բարադարի ձերբակալությունն իրականացվել է Պակիստանի միջգերատեսչական հետախուզության գործակալների եւ ԿՀՎ աշխատակիցների համատեղ հատուկ գործողության շնորհիվ: Բարադարի ձերբակալության մասին թերթին հայտնի էր դարձել փետրվարի 11-ին, սակայն լուրի հրապարակումը հետաձգվել էր Սպիտակ տան պահանջով: Ամերիկացիները հույս ունեն Բարադարից կորզել արժեքավոր հետախուզական տեղեկություններ, այդ թվում՝ Օմարի գտնվելու վայրի մասին:

Ներկայումս «Թալիբանի» երկրորդ դեմքը Պակիստանի բանտերից մեկում է, որտեղ նրան հարցաքննում են ինչպես պակիստանցի իրավապահները, այնպես էլ ԿՀՎ գործակալները: Հարցաքննությունների ընթացքի մասին չի հաղորդվում, սակայն թերթի աղբյուրներն ընդգծում են, որ Բարադարի ձերբակալությունը կարող է հանգեցնել «Թալիբանի» նաեւ մյուս առաջնորդների կալանավորմանը, իսկ հեռանկարում՝ ամբողջ շարժման չեզոքացմանը:

Աբդուլ Ղանի Բարադարի ձերբակալությունը պակիստանյան եւ ամերիկյան հատուկ ծառայությունների խոշորագույն հաջողությունն է «Թալիբանի» դեմ ծավալված պայքարի ամբողջ ժամանակամիջոցում: Հետախուզական տվյալների համաձայն, Բարադարն անմիջականորեն ղեկավարել է թալիբների գործողությունները Աֆղանստանում, իսկ Օմարը շարժման գաղափարախոսական առաջնորդն է: Բարադարը նաեւ քաղաքում «Թալիբանի» առաջնորդների խորհրդի ղեկավարն է:

Բարադարին է վերագրվում նաեւ թալիբ գրոհայինների վարքուկանոնների յուրօրինակ ժողովածուի հեղինակությունը: Այդ գրքույկի նպատակն է փոխել շարժման բացասական «նկարագիրը»: Մասնավորապես «Թալիբանի» մարտիկներին խորհուրդներ են տրվում, թե ինչպես կարելի է խաղաղ բնակչության շրջանում խուսափել զոհերից, ձեռք բերել տեղաբնակների համակրանքը եւ այլն: Նաեւ հանձնարարվում է հնարավորինս քիչ դիմել մահապարտ ահաբեկիչների ծառայություններին:



# Google- ի եւ Facebook-ի մրցապայքարն ավարտվեց հօգուտ Facebook-ի

**Google- ի առաջարկած նոր Buzz սոցիալական ցանցի փորձարկումներն անադյունավետ են ավարտվել: Օգտագործողների կողմից անձնական կյանքի իրավունքի խախտման բազմաթիվ բողոքներից հետո ընկերությունը ստիպված է եղել հայտարարել, որ ոչ միայն ցանցը փոփոխությունների է ենթարկվել, այլեւ կշարունակեն աշխատել բարելավման ուղղությամբ:**

**Buzz սոցիալական նոր ցանցը գործարկվեց փետրվարի 9-ին: Gmail-ի հետ համատեղ առաջարկվող այս ծառայությունը հնարավորություն է տալիս փոխանակել նորություններ, թարմացնել ստատուսները, կարդալ ընկերների նոր հաղորդագրությունները: Ըստ էության այս նոր ցանցի ստեղծմամբ Google-ը մարտահրավեր էր նետում Facebook-ին, որը հիմնադրվելով 2004-ին, ունի շուրջ 400 միլիոն օգտագործողներ:**

**BBC-ի հաղորդմամբ, տասնյակ միլիոնավոր օգտագործողներ բողոքում էին, որ ծառայությունը հնարավորություն է տալիս ցանցային ընկերներին տեղեկանալու, թե օգտագործողն ում հետ է եղել ակտիվ նամակագրական կապի մեջ:**

**Բելառուս հետազոտող Եվգենի Մորոզովը նկատել է, որ առանց դժվարության Google Buzz-ի միջոցով կարելի է պարզել օգտագործողների նախկին նամակագրական կապերը:**

**Այս առիթով Google-ի ղեկավարները ներողություն են խնդրել օգտագործողներից եւ հայտարարել, որ իրենք աշխատում են ջանասիրաբար եւ շուտով նկատելի կլինեն փոփոխությունները:**




**Buzz սոցիալական ցանցի ղեկավարներից Թոդ Ջեքսոնը նշել է, որ իրենք մտածում են առաջիկայում ծառայությունն առաջարկել Gmail-ից առանձին, իսկ օգտագործողներն իրենք կընտրեն իրենց ցանցային ընկերներին: Gmail-ի օգտագործողների թիվը ներկայումս հասնում է 170 միլիոնի:**

**Ի դեպ, սա առաջին դեպքը չէ, երբ Google-ը օգտագործողներին է առաջարկում սոցիալական ցանցի իր տարբերակը՝ միաժամանակ փորձելով մրցակցել Facebook-ի հետ: 2004 թվականին առաջարկել է Orkut անունը կրող ցանցը, վերջերս էլ՝ Google Wave-ը: Մինչ օրս, սակայն, Facebook-ը շարունակում է մնալ ամենատարածված սոցիալական ցանցը ողջ աշխարհում:**

Ա. Բ.

AZG NEW PDF.qxd 2/16/2010 10:19 PM Page 1



# Արվեստագիտական լուրջ հանդես՝ Գյումրիում

«Արվեստ եւ ժամանակ» հանդեսը՝ հիմնադրված 2006-ին Գյումրիում, գիտամշակութային ուղղվածություն է որդեգրել, այն երկլեզվյա է, գերակշռում է հայերենը, հոդվածներից մի քանիսը տպագրված է ռուսերենով: 2009-ի 1-2 միասնական համարում զետեղված են տարաբնույթ հրապարակումներ: «Նշխարներ Շիրակի ամբարներից», «Գեղագիտություն եւ մշակութաբանություն», «Գրականություն, լեզվաբանություն, արվեստ» խորագրային նյութերը կարելի է համարել առանձին բաժիններ, որոնց հիմնական անդրադարձներն արդի արվեստի տարբեր խնդիրներ են քննում. մի փոքրիկ անկյուն տրամադրված է անցյալին՝ «Երախտիքի խոսք» եւ «Հոբելյան» խորագրերը հարգանքի տուրք են մշակույթի մեր երախտավորներին: Անդրադարձներ կան ընթացիկ փառատոներին ու ցուցահանդեսներին, նոր գրքերին, շոշափվում են կրթական եւ այլ հարցեր:

Հովհաննես Շիրազի «Սիամանթո եւ Խջեզարե» պոեմի ստեղծագործական պատմության մասին է Սենեքերիմ Մելքոնյանի հրապարակումը, Կարինե Ավդալյանը ներկայացնում է հայկական երաժշտությունը՝ ազգայինի եւ համամարդկայինի համատեքստում: Կլոդ Դեբյուսիի գեղագիտության մի շարք հարցեր է արծարծում Նինա Հայրապետյանի հոդվածը: Հետաքրքրական մոտեցումներ է ի հայտ բերում պատմական գիտությունների դոկտոր Սարգիս Պետրոսյանի հրապարակումը, որում հեղինակը համեմատական քննության է ենթարկում հարվածային մի քանի նվագարանների (թմբուկ, դափ) անվանումների ծագումնաբանական հարցը՝ ըստ նշանավոր լեզվաբաններ Ստ. Մալխասյանի, Հր. Աճառյանի եւ Սրբուհի Լիսիցյանի, ինչպես նաեւ օտար ուսումնասիրողների եւ եզրակացնում, որ դրանք հնագույն ծագում ունեցող բառեր են՝ բնաձայնական հիմքերով եւ հնդեվրոպական-հայկական ստուգաբանությամբ, եւ հայկական կողմը գոնե անվանումների դեպքում «ոչ թե փոխառող, այլ փոխատու կողմ է ինչպես իրանական, այնպես էլ Մերձավոր Արեւելքի առանձին լեզուների նկատմամբ»: Ըստ հեղինակի, իրանականը եւս որպես փոխատու կողմ է հայերենի մի քանի բարբառների, նաեւ արաբերենի, ասորերենի, թուրքերենի նկատմամբ:

Արվեստների ու արհեստների տաղանդով բնությունից շռայլորեն օժտված Շիրակի դաշտավայրը, կաթիլ-կաթիլ ամբարելով դրանք՝ ստեղծել է մշակութային ինքնատիպ մթնոլորտ ունեցող իր աշխարհը: «Շիրակի ամբարների նշխարներից» Մանուկ Մանուկյանն անդրադառնում է հայ ազգային-աշուղական երաժշտության մեջ Ջիվանու դերին ու բերած նորարարություններին:

Ինչպիսի փոփոխություններ, բեմադրական ու դերասանական արվեստի նոր զարգացումներ ապրեց Գյումրու Ա. Մռավյանի (ներկայումս Վ. Աճեմյանի) անվան թատրոնը Խորեն Աբրահամյանի մուտքով. այս մասին է թատերագետ Լեւոն Մութաֆյանի ընդարձակ վերլուծականը:

Ճարտարապետական գիտությունների դոկտոր, ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Գրիգորյանի «Հառիճի վանքային համալիրը խորհրդանշանային մտածողության տեսակետից» հրապարակման մեջ VII-XIII դդ. հոգեւոր ճարտարապետության այս սքանչելի կոթողները կառուցվածքային առանձնահատկություններից բացի մեկնաբանվում են՝ հատկապես եւ հանգամանորեն, դրանց խորհրդակիր հորինվածքային տարրերի նշանակությունների եւ իմաստների տեսանկյունից:

Տաղանդաշատ ու նորարար 60-ականների գեղագիտական շարժման մեջ բացառիկ տեղ վերապահված էր Մինաս Ավետիսյանին. նրա մասին բազմաթիվ մենագրությունների, հուշերի, ալբոմների առկայությամբ, գնահատելի է նոր բացահայտումների ու մեկնաբանությունների ի հայտ գալը:




«Արվեստ եւ ժամանակ» հանդեսում Մինաս Ավետիսյանի գեղանկարչությանն է անդրադարձել արվեստագիտության թեկնածու Աննա Գալստյանը՝ շոշափելով նրա արվեստին առնչվող մի քանի զգայուն շերտեր՝ հոգեւոր-ստեղծագործական՝ արմատներ-ներշնչանքներ (իր հոգու եւ ծննդավայր Ջաջուռի գույն-արտումի միաձույլ մթնոլորտ), բնանկարների՝ բնությանը մերձեցված ֆիգուրների հանդարտություն, ինքնադիմանկարների դրամատիկ-ներհայեցողական վիճակի խտացում:

Մինասի կոլորիտային խորը զգացողական աշխարհի, գույնի ներքին տագնապի եւ պատկերամտածողության, դրանց արտաքին հանդարտության ակունքների մասին հեղինակը գրում է. *«Ինքը՝ հեղինակը, չէր հավակնում միջնադարյան արժեքները կրողի դերին: Եթե նա իր ներքին ազատության հաշվին է մոտեցել հայկական ժառանգության ոսկեդարին, ապա դա կրկին հաստատում է նրա տաղանդի մեծությունը»:*

Արվեստաբանն անդրադառնում է Ջաջուռում Մինասի վերաբացված թանգարանի ներկա վիճակին ու գործունեությանը՝ անհրաժեշտ համարելով մինասագիտության զարգացումը, իսկ դրա համար առաջնային է նկարչի ստեղծագործության լիարժեք ներկայացումը, ինչը բացակայում է թե՛ Ջաջուռում, թե՛ Երեւանի պատկերասրահներում (10-15 գործ միայն՝ ազգային պատկերասրահում եւ ժամանակակից արվեստի թանգարանում): Մինասի ժառանգության գերակշիռ մասն անհատական հավաքածուներում է:

Երաժշտագետ Գեւորգ Գյոդակյանի ստեղծագործական կենսագրության, հայ երաժշտական միջնադարագիտության կարեւոր մի ոլորտի՝ խազերի վերծանման մեջ Գյոդակյանի մեթոդաբանական նոր մոտեցումներին, Կոմիտասի երկերի ակադեմիական հրատարակության կազմակերպման, պատրաստման մեջ նրա դերին է անդրադառնում արվեստաբան Մհեր Նավոյանը՝ Գեւորգ Գյոդակյանի 80-ամյա հոբելյանի առիթով:

Մի առանձին թեթեւությամբ ու հետաքրքրությամբ է ընթերցվում Գեղունի Չթչյանի հիշողությունների էջը կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի մասին՝ ստեղծելով ուսուցչի սիրելի ու հարազատ կերպար, որում պարզ ու բնականորեն միաձույլ են մանկավարժի հանդարտ ու կոմպոզիտորի արտիստիկ խառնվածքները: Հիշողությունների ծալքերն անցյալի թանկ զգացումներ են բացահայտում:

Ներկայացնելով Գ. Եղիազայանի հարուստ ու բազմաժանր ժառանգությունը՝ հուշագիրը կարծում է, որ կոմպոզիտորն արժանի գնահատականի ու ճանաչման չի արժանացել. *«Ինձ միշտ հուզել է այն միտքը, որ նկարիչ Հակոբ Կոջոյանին եւ կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանին ճակատագիրը նույն բախտին է արժանացրել: Ինչպես Կոջոյանն իր սքանչելի արվեստով մնաց վիթխարի Մարտիրոս Սարյանի ստվերում, այնպես էլ Եղիազարյանն իր սքանչելի արվեստով մնաց վիթխարի Արամ Խաչատրյանի ստվերում: Այս երկու նրբահյուս, բարձրաճաշակ արվեստագետներն աշխարհ եկան ոչ պատեհ մի ժամանակ»:*

Հայ-լեհական մշակութային առնչությունների պատմության մեջ երաժշտությունն իր հաստատուն տեղն ունեցել եւ՝ է: Այդպիսի մնայուն հետք թողեց 2008-ի ապրիլին տեղի ունեցած Պենդերեցկու օրերը Հայաստանում փառատոնը: Հայ-լեհական երաժշտական պատմությունից հիշարժան էջեր է ներկայացնում արվեստագիտության դոկտոր Սվետլանա Սարգսյանը՝ «Страницы армяно-польской музыкальной дружбы» հոդվածում՝ սկսելով 1966-ին Լեհաստանում հայ երաժշտության դեկադայից, 1974-ին «Վարշավայի աշուն» փառատոնի ժամանակ Քեթի Բերբերյանի եւ Քշիշտոֆ Պենդերեցկու հետ իր ծանոթություններից, 1980-ին Երեւանում Լեհաստանի կոմպոզիտորների միության պատվիրակության այցից, 1989-ին Լեհաստանում հայ երաժշտության օրերից մինչեւ «XXI դարի հեռանկարների» «Պենդերեցկու օրերը Հայաստանում» փառատոնը, որով ամբողջանում է հայ-լեհական երաժշտական բարեկամության XX դարը:

Մ. Բ.

# Հայ գրողների հանդիպումը Գլենդելում

Գլենդելի Հանրային գրադարանի դահլիճում՝ փետրվարի 4-ին, կայացել է Կալիֆոռնիայի հայ գրողների միության (ԿՀԳՄ) գրական հանդիպումը, որի ժամանակ հայտնի է դարձել, որ ընթացիկ ամսում կայանալու է նաեւ ԿՀԳՄ-ի ընդհանուր ժողովը, որի ընթացքում քննարկվելու է վարչության հաշվետվությունը, ինչպես նաեւ կայանալու է հաջորդ վարչության ընտրությունը:

Գրական հանդիպման ժամանակ նոր ստեղծագործությունների ընթերցումով հանդես են եկել բանաստեղծներ **Գեւորգ Քրիստինյանը, Ներսես Տեր-Մեսրոպյանը,** իսկ **Գառնուշ Հարյանցը** կարդացել է քաղաքական սատիրայով ու ազգային երգիծանքով հագեցած առածներ: Ընթերցումների մեջ հատկանշական է եղել գրող **Նիկոլայ Ստեփանյանի** հրապարակագրությունը, որը ներկայացնում է մամուլի եւ հեռուստատեսության կարեւորությունը հասարակության մեջ, ինչպես նաեւ շեշտում, որ գրողներն ու գրողների միությունն ուղղակի անհրաժեշտություն են այդ ասպարեզում: Արձակագիր **Պողոս Գուբելյանն** էլ մի հատված է կարդացել տարիներ առաջ լույս տեսած «ՖՐԻՎԵՅ» վեպի շարունակությունը կազմող, բայց դեռ լույս չտեսած մասից: Նիստի եւ գրական երեկոյի ներկաները մեկ րոպե լռությամբ հարգել են նաեւ հայագետ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Խռլոպյանի հիշատակը, ով վախճանվել է վերջերս՝ հունվարի 30-ին: Այնուհետեւ ԿՀԳՄ-ի նախագահ բանաստեղծ **Գրիշ Դավթյանը** համառոտ ներկայացրել է հանգուցյալի հրատարակած աշխատությունները:

Այսուհետ միության գրական նիստերը տեղի կունենան յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթի օրերին:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՏԻՎ ԱՐԺԱՆԱՎՈՐԻՆ

# Մեծարեցին ակադեմիկոս Մանվել Զուլալյանին

Երեկ ԳԱ ակադեմիայում մեծ շուքով նշեցին ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մանվել Զուլալյանի** ծննդյան 80 եւ գիտամանկավարժական գործունեության 55-ամյա հոբելյանները: Հանդիսությունը բացեց ու հոբելյարին շնորհավորեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը** նշելով. «Մանվել Զուլալյանը մեծ ավանդ ունի մեր պատմագրության ոլորտում ու նրա գրքերը միշտ շատ բարձր են գնահատվել: Ձեր անցած կյանքի ճանապարհը եղել է դժվարին, բայց մշտապես վերելքի եւ մեծ, պատվավոր նվաճումների ոդիսական»: ՀՊՄՀ համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Արտուշ Ղուկասյանը** իր ողջույնի խոսքում նշեց. «Մենք բարձր ենք գնահատում անցած տասնամյակների ընթացքում կատարած Ձեր գիտական վաստակը, որը լուրջ ներդրում է մեր երկրում պատմագիտության զարգացման բնագավառում: Ազատ տիրապետելով մի քանի լեզուների՝ Դուք կատարել եք մեծ ծավալի աղբյուրագիտական աշխատանք՝ հայոց եւ Օսմանյան կայսրության միջնադարյան պատմության ամենակնճռոտ հիմնախնդիրների ուսումնասիրման գործում: Հենց այդ ուսումնասիրություններն են հիմք դարձել Արեւմտյան Հայաստանի միջնադարյան պատմության համակարգված եւ գիտական շարադրանքի համար»: Զուլալյանի սան, պրոֆեսոր Ա. Ղուկասյանը երախտագիտությամբ էր նշում, որ «պրոֆ. Զուլալյանը այսօր երիտասարդական ավյունով է մտնում լսարան ու իր ողջ կուտակած գիտելիքները ջանադրաբար փոխանցում է ուսանողներին: Նա գիտության մարդ է ու իր անձնականը մոռացած անմնացորդ նվիրվել է գիտությանը եւ այն զուգակցել է մանկավարժությանը, եւ մեր սերունդները միշտ հիշելու են նրան»:



Հոբելյանի անցած գիտամանկավարժական ուղու եւ թողած ժառանգության մասին զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր **Ռուբեն Սաֆրաստյանը**: «Մանվել Զուլալյանն այն պատմաբաններից է, այն թուրքագետներից, որը ոչ միայն ուսանել է ռուսական արեւելագիտության հիմնադիրներից, այլ նաեւ եղել է ռուս արեւելագետների, թուրքագետների գիտական կոլեգան եւ նրանց հետ համատեղ աշխատություններ է ստեղծել»: Մ. Զուլալյանի գործունեության կարեւոր փուլին անդրադառնալով պրն Սաֆրաստյանը նշեց, որ գիտական բազմաթիվ աշխատությունները թուրքագիտության, օսմանագիտության, հայագիտության ոսկե ֆոնդում են գտնվում եւ այդպիսին էլ կմնան տասնամյակներ հետո նաեւ: Բացի մանկավարժական գործունեությունից, Մանվել Զուլալյանը մի քանի տասնյակ ատենախոսությունների տվել է ճիշտ գնահատական, մասնագիտական աջակցություն է ցուցաբերել մտավորականներին, քաղաքական գործիչներին եւ պետական այրերին ազգային ու պետական կարեւոր հարցերի շուրջը:

Հոբելյանին շնորհավորական ուղերձներ հղեցին ու գնահատանքի ջերմ խոսքեր հնչեցրեցին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն **Աշոտ Մելքոնյանը**, ՀՊՄՀ պատմության ֆակուլտետի ամբիոնի վարիչ **Մհեր Կարապետյանը**, ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ **Վալերի Ղլեչյանը**, ակադեմիկոսներ **Վլադիմիր Բարխուդարյանը**, **Պարույր Մուրադյանը** եւ ուրիշներ: Իսկ ԵՊՀ ռեկտոր, ակադեմիայի թղթակից անդամ **Արամ Սիմոնյանը** գնահատանքի խոսքերից զատ, հոբելյարին շնորհավորեց բուհի ոսկե մեդալին արժանանալու համար եւ հատկապես անդրադարձավ նրա աղբյուրագիտական բազմալեզու աշխատություններին ու նաեւ զարմանալի նվիրումին՝ հանդեպ իր ուսանողները: Մի առիթով Մանվել Զուլալյանն ասել է, «դարաշրջանները փոխվում են, թուրքերը չեն փոխվում»:

ԵՄՊՀ-ի պատմության ֆակուլտետի ուսանողության անունից **Լիանա Չիբուխչյանը** շնորհավորելով սիրելի դասախոսին, գնահատանքի խոսքեր հղեց ու շեշտեց. «Հպարտ ենք, որ եղել ենք ձեր ուսանողները»:

Հուզիչ էր ուսանողների ողջույնի խոսքը, որը պրոֆեսոր Մանվել Զուլալյանը համարեց իր գործունեության գնահատանքը ու իր շնորհակալական խոսքը հղեց այն բուհերին, ինստիտուտների ղեկավարներին, ակադեմիկոսներին, դասախոսներին, որոնք մշտապես եղել են իր կողքին, աջակցել ու տվել հնարավորություններ պատմագիտական աշխատությունների ստեղծման համար: «1947-ին երբ Հալեպից ծնողներիս հետ հայրենիք եկա, մտքովս անգամ չէր անցնում, որ բարձրագույն կրթություն կստանամ, առավել եւս, որ ակադեմիկոս կդառնամ եւ այսօրվա իմ մեծարման օրը կտեսնեմ: Բայց այդ բոլորը կատարվեցին հայրենիքի շնորհիվ, որին ես խորապես երախտապարտ եմ»: Այնուհետեւ հոբելյանը պատմեց, թե ինչպես ակադեմիկոս Սուրեն Երեմյանի միջնորդությամբ ակադեմիկոս Օրբելին համաձայնվել է ղեկավարել հայ երիտասարդների խմբին, որոնց թվում է եղել նաեւ ինքը:

Անդրադառնալով պատմագրությանը՝ ակադեմիկոսը նշեց. «Այսօր էլ մեզ՝ բոլոր հայերիս հուզում է ադրբեջանական պատմագրությունը: Ես վաղուց եկել եմ այն եզրակացության, որ ադրբեջանական պատմագրությունը գտնվում է անմիջականորեն թուրքական պատմագրության ազդեցության տակ եւ որ այն հիմնական զինանոցն է: Դա ես նկատել եմ դեռեւս 60-70-ական թվականներին, սակայն այն ժամանակ արգելվեց այդ մասին խոսելը: Բայց հիմա բոլորն էլ համոզվել են, որ ես այն ժամանակ ճիշտ էի: Ես աշխատել եմ ուղի հարթել, ճանապարհ հարթել, ինչ-որ մի տեղ հաղորդել այդ պատմությունը: Ես այդքան կարող էի, այդքան արեցի, թող ինձանից հետո ավելի լավ անեն»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 2/16/2010 10:20 PM Page 1



# Դարչինյանը կրկին մարտահրավեր է նետում Դոներին

Այն բանից հետո, երբ 2007-ին ֆիլիպինցի Նոնիտո Դոներն անսպասելիորեն նոկաուտի ենթարկեց Վախթանգ Դարչինյանին, հայ բռնցքամարտիկը բազմիցս ձգտել է նրա նկատմամբ ռեւանշի հասնել: Վերջերս Վախթանգը կրկին մարտահրավեր է նետել Դոներին:

«Վախթանգը երբեք չի ասել, որ չի ցանկանում ռեւանշի հասնել Դոների նկատմամբ: Այդ ամենի մեղավորը ես եմ: Հարգում եմ Վախթանգին, որ նա ընդունում էր այլ բռնցքամարտիկների հետ մենամարտելու իմ առաջարկները: Վախթանգին խոստացել էի, որ անպայման կկազմակերպեմ նրա մենամարտը Դոների հետ: Խոսել եմ Դոների մենեջերի հետ ու հայտնել, որ մենք ձգտում ենք ռեւանշի», նշել է Հերի Շոուն:



Առաջին թեթեւագույն քաշային կարգում WBC-ի եւ WBA-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Վախթանգ Դարչինյանի պրոմոութեր Հերի Շոուն այդ մասին արդեն տեղեկացրել է ֆիլիպինցու մենեջեր Կեմերոն Դանկինին: Շոուն խոստովանել է, որ ինքը եւս մեղավոր է, որ մինչեւ այժմ ռեւանշ-մենամարտը չի կայացել: Պատճառն այն է, որ Շոուն զայրացած էր Դոների վրա, որը Վախթանգին հաղթելուց հետո հեռացել էր իր մոտից` ընդունելով պրոմոութեր Բոբ Արումի հրավերը:

Սակայն միայն Դարչինյանի եւ Շոուի ցանկությունը բավարար չէ, որպեսզի այդ մենամարտը կայանա: Դոների պրոմոութեր Բոբ Արումն այլ ծրագրեր ունի: Մանուել Վարգասին հաղթելուց հետո Արումը հայտարարել է, որ ցանկանում է մենամարտ կազմակերպել թեթեւագույն քաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն Ֆեռնանդո Մոնտիելի հետ: Հնարավոր է, որ այդ մենամարտը կայանա մայիսի 8-ին, Մեքսիկայում: Ըստ Արումի, առաջին թեթեւագույն քաշային կարգում բացի Դարչինյանից չկան այլ բռնցքամարտիկներ, որոնց հետ մենամարտը Դոների համար եկամտաբեր լինի: Ուստի Դոները պետք է տեղափոխվի քաշային հաջորդ կարգ:

Մինչ պրոմոութերները բանակցում են մենամարտի հնարավոր կազմակերպման հարցի շուրջը, երկու բռնցքամարտիկները կրկին բարձրագոչ հայտարարություններ են արել:

«Բռնցքամարտի սիրահարները ցանկանում են իմանալ, թե արդյոք ո բախտը երկրորդ անգամ կբերի՞: Դու լավ ես գիտակցում, թե ինչպես կավարտվի մեր 2-րդ մենամարտը: Դու նոկաուտի կենթարկվես: Ուստի քեզ չեմ մեղադրում, որ չես ցանկանում հանդիպել ինձ հետ: Սակայն եթե դու իսկապես բռնցքամարտիկ ես, ապա պետք է ընդունես մարտահրավերը: Հակառակ դեպքում քո համար հարգազրույց կկազմակերպեմ կանանց ներքնազգեստի «Վիկտորիա՛զ Սիկրետ» հանդեսում», հայտարարել է Վախթանգ Դարչինյանը:

Բնականաբար, Դոները պարտքի տակ չմնաց. «Ես արհամարհում էի Դարչինյանին, սակայն նա շարունակ նվնվում է: Դա ինձ արդեն հոգնեցրել է, ուստի ցանկանում եմ փակել նրա բերանը: Հույս ունեմ, որ մեր մենամարտը կկայանա: Ես ոչ մի տեղ չեմ կորել: Ես բռնցքամարտիկ եմ եւ պետք է ենթարկվեմ իմ պրոմոութերին: Անկասկած, ցանկանում եմ մենամարտել Դարչինյանի հետ, մանավանդ, որ դա ինձ կարող է չեմպիոնական 2 գոտի պարգեւել»:

# «Փյունիկն» ու «Միկան» կրկին պարտվեցին

**Կիպրոսում ուսումնամարզական հավաքի մեջ գտնվող ՀՀ չեմպիոն «Փյունիկը» եւ արծաթե մրցանակակիր «Միկան» հերթական ստուգողական հանդիպումներն անցկացրին ու կրկին պարտվեցին:**



**«Միկան» ուժերը չափեց Կիեւի «Դինամոյի» 2-րդ կազմի հետ: Առաջին խաղակեսում հիմնականում հավասար պայքար ընթացավ: Սակայն 19-րդ րոպեին «Միկայի» պաշտպան Գեւորգ Պողոսյանն անհաջող փորձեց կասեցնել փոխանցումը եւ գնդակն ուղարկեց սեփական դարպասը: «Միկան» կարող էր վերականգնել հավասարակշռությունը, սակայն Վիգեն Համբարձումյանը չիրացրեց գոլային պահը: Ընդմիջումից հետո դինամոյականները եւս 2 գոլ խփեցին ու խաղը շահեցին 3-0 հաշվով:**

**«Միկան» առաջին խաղակեսում հանդես եկավ հետեւյալ կազմով. Արթուր Հարությունյան, Ալեքս, Հրայր Մկոյան, Հայկ Իշխանյան, Գեւորգ Պողոսյան, Ստեփան Հակոբյան, Արմեն Պետրոսյան, Վիգեն Համբարձումյան, Արամ Ոսկանյան, Մինդաուգաս Գրիգալեւիչյուս:**

**Ընդմիջումից հետո խաղադաշտ մտան Սաուլիուս Կլեւինսկասը, Ալեքսանդր Թադեւոսյանը, Աղվան Մկրտչյանը, Ուլիսես Մոնտենեգրոն, Էդնեյը, Ժունիոր Էդիլսոնը, Բոտի Դեմելը, Հրաչյա Միքայելյանն ու Նարեկ Բեգլարյանը: Փաստորեն միայն Ալեքսն ու Մկոյանը մասնակցեցին ողջ հանդիպմանը: Փետրվարի 18-ին «Միկան» կմրցի լեհական «Սլասկ» թիմի հետ:**

**Երկրի չեմպիոն «Փյունիկը» 0-2 հաշվով պարտվեց սերբական «Բանատին»: Այդ խաղում «Փյունիկի» կազմն այսպիսին էր. Էդուարդ Հովհաննիսյան, Սարգիս Հովսեփյան, Արթուր Յուզբաշյան, Վահագն Մինասյան, Արտակ Եդիգարյան, Էդգար Մալաքյան, Արգին Նազարյան (Միհրան Մանասյան), Կառլեն Մկրտչյան, Դավիթ Մանոյան, Մարկոս, Ալբերտ Թադեւոսյան:**

# Նախընտրելի է Եվրոպան

**ՖԻՖԱ-ի նախագահ Յոզեֆ Բլատերը հայտարարել է, որ մտադրություն կա 2018-ի ֆուտբոլի աշխարհի առաջնությունն անցկացնել Եվրոպայում: Այդ մասին դեռեւս վերջնական որոշում չի կայացվել:**

**2018-ի աշխարհի առաջնությունն իրենց մոտ անցկացնելու համար հայտ են ներկայացրել Անգլիան, Ռուսաստանը, Հոլանդիան ու Բելգիան, Իսպանիան ու Պորտուգալիան: Մյուս մայրցամաքներից առաջնության կազմակերպիչ երկրին հավակնում էին ԱՄՆ-ը, Ավստրալիան եւ Ճապոնիան:**

**Ըստ բրիտանական «Daily Telegraph»-ի, Բլատերն արդեն սկսել է գաղտնի բանակցությունները ոչ եվրոպական թեկնածուների հետ: Նա փորձում է այդ երկրներին համոզել հրաժարվել 2018-ի աշխարհի առաջնության ներկայացրած հայտից ու կենտրոնանալ 2022-ի մրցաշարի վրա: ՖԻՖԱ-ի ներկայացուցիչներն արդեն նախնական բանակցություններ են վարել ամերիկացիների, ավստրալացիների եւ ճապոնացիների հետ: Լրատվամիջոցները համոզված են, որ մի քանի ամիս անց նշված երկրները կհրաժարվեն 2018-ի աշխարհի առաջնությունից:**

**Որն է Բլատերի այս քայլերի դրդապատճառը: Բանն այն է, որ այս տարի կայանալու են ՖԻՖԱ-ի նախագահի ընտրությունները: Բլատերն իր թեկնածությունն առաջադրելու է 4-րդ անգամ: Այդ պաշտոնին հավակնում են նաեւ Ասիայի ֆուտբոլի կոնֆեդերացիայի նախագահ Մոհամեդ Բին Համամը եւ Հարավային Կորեայի ներկայացուցիչ Մունգ-Ջուն Չանգը: Ոչ բոլորն են գոհ Բլատերի վարած քաղաքականությունից, ուստի ՖԻՖԱ-ի նախագահը ձգտում է լրացուցիչ ձայներ ստանալ: Նրան շատ է անհրաժեշտ հատկապես ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինիի աջակցությունը: Իսկ վերջինս պատրաստ է աջակցել միայն այն դեպքում, եթե 2018-ի ֆուտբոլի աշխարհի առաջնությունն անցկացվի Եվրոպայում:**

ՕԼԻՄՊԻԱԴԱ-2010

# Մեր դահուկորդները 8-րդ տասնյակում են



**Վանկուվերում ընթացող ձմեռային օլիմպիադայում Հայաստանի 4 պատվիրակներից առաջինը մրցասպարեզ դուրս եկան դահուկորդներ Քրիստինա Խաչատրյանն ու Սերգեյ Միքայելյանը:**

**Քրիստինան մասնակցեց ազատ ոճով 10 կմ դահուկավազքին: Գյումրեցի մարզուհուն հաջողվեց հատել վերջնագիծը` 78 մասնակիցների մեջ գրավելով 76-րդ տեղը: Խաչատրյանը մրցատարածությունը հաղթահարեց 34 րոպե 17,5 վրկ-ում: Նա առաջ անցավ մակեդոնացի Ռոսանա Կիրոսկայից (մոտ 28 վրկ-ով) եւ սերբ Բելմա Շմիկովիչից (1 րոպե 30 վրկ-ով): Այս մրցաձեւում հաղթող ճանաչվեց շվեդ դահուկորդուհի Շառլոտ Կալան, որը ցույց տվեց լավագույն արդյունքը` 24:58,4: Նրան 6,6 վրկ-ով զիջեց էստոնացի Քրիստինա Շմիգուն-Վյախին: Բրոնզե մեդալը բաժին հասավ նորվեգուհի Մարիտ Բյորգենին: Ռուսաստանցի դահուկորդուհիներից լավագույնը Եվգենիա Մեդվեդեւան էր, որը զբաղեցրեց 7-րդ հորիզոնականը:**

**Սերգեյ Միքայելյանն ավելի հաջող հանդես եկավ: 15 կմ ազատ ոճով դահուկավազքում հայ մարզիկը 95 մասնակիցների մեջ գրավեց 70-րդ տեղը: Նա օլիմպիական չեմպիոն, շվեյցարացի Դարիո Կոլոնյային զիջեց 4 րոպե 22,6 վրկ-ով: Սերգեյը մրցատարածությունը հաղթահարեց 37 րոպե 58,9 վրկ-ում:**

**Արծաթե մեդալակիր դարձավ իտալացի Պյետրո Պիլեր-Կոտրերը, որը հաղթողին զիջեց 24,6 վրկ: Բրոնզե մրցանակակիրը չեխ դահուկորդ Լուկաշ Բաուերն էր:**

# Պարտությունը կարող է ճակատագրական լինել

**Շախմատի «Աերոֆլոտի» մրցաշարի C խմբում հանդես եկող Դավիթ Շահինյանի համար նախավերջին` 8-րդ տուրն անհաջող դասավորվեց: Մրցաշարի միանձնյա առաջատարն անդրանիկ պարտությունը կրեց, ինչը կարող է ճակատագրական լինել Դավիթի համար: Շահինյանը սպիտակներով զիջեց ռուսաստանցի Սերգեյ Վոլկովին: Դա հնարավորություն տվեց մեկ այլ ռուսաստանցի շախմատիստ Էդուարդ Խասնեւին միավորներով հավասարվել Շահինյանին եւ նրա հետ գլխավորել աղյուսակը: Երկուսն էլ ունեն 6,5-ական միավոր:**

**Ավարտական տուրում Շահինյանը սեւերով կխաղա գերմանացի Գերդ Ձահրսդորֆերի հետ, իսկ Խասնեւը սպիտակներով ուժերը կչափի Սերգեյ Վոլկովի հետ: Վերջինս վեց շախմատիստների հետ 6 միավորով հետապնդում է առաջատարներին: Նրանց թվում է նաեւ ռուսաստանցի Էդուարդ Բարսամյանը: Նա կարող էր ստանձնել մրցաշարի միանձնյա առաջատարի դերը, սակայն պարտվեց Էդուարդ Խասնեւին: 6 միավոր ունի նաեւ Աշոտ Ավետիսյանը, որը վերջին տուրերում հաջող է խաղում: 8-րդ տուրում նա պարտության մատնեց Մայքլ Ձենյին: Ավարտական տուրում Ավետիսյանը կմրցի Բարսամյանի հետ:**

**5-ական միավոր ունեն Տիգրան Հարությունյանն ու Լեւոն Քարամյանը: Տիգրանը հաղթեց Միխայիլ Կուզնեցովին, Լեւոնը հաշտություն կնքեց թուրք Օզգուր Սոլակօղլուի հետ: Հաղթելով Ֆահամ Ֆարադիին, 4 միավոր վաստակեց Հայկ Գալստյանը:**

**Ուժեղագույնների մրցաշարում անդրանիկ պարտությունը կրեց Արման Փաշիկյանը` զիջելով առաջատարներից մեկին` Յան Նեպոմնյաշչիին: Վերջինս վաստակեց 5 միավոր եւ Բորիս Գրաչովի, Լե Քուանգի, Բորիս Սավչենկոյի ու Նգուեն Սոնի հետ գլխավորեց աղյուսակը:**

**Առանց պարտության է ընթանում Գաբրիել Սարգսյանը: Սակայն նա անցկացրած 7 պարտիաներում միայն մեկ հաղթանակ է տոնել: Գաբրիելը 6-րդ պարտիան ավարտեց ոչ-ոքի գրոսմայստեր Ալեքսանդր Խալիֆմանի հետ մրցավեճում: Գաբրիելն ու Արմանը ունեն 4-ական միավոր: 3,5-ական միավոր են վաստակել Զավեն Անդրեասյանն ու Հրանտ Մելքումյանը: Զավենը ոչ-ոքի ավարտեց պարտիան Հոու Յիֆանի հետ, իսկ Հրանտը հաղթեց Լեյլա Ջավախիշվիլուն:**

**A2 մրցաշարում մեր երկու մասնակիցները` Տիգրան Քոթանջյանն ու Դավիթ Պետրոսյանը 4-ական միավորով բաժանում են 19-27-րդ տեղերը: Եթե Քոթանջյանը պարտվեց Սերգեյ Պավլովին, ապա Պետրոսյանը հաղթեց Սոկիք Դյուրաեւին: Մրցաշարի առաջատարը 5,5 միավորով ռուսաստանցի Ալեքսեյ Պրիդորոժնին է: Ռուսաստանի դրոշի ներքո հանդես եկող Արթուր Գաբրիելյանը 5 միավորով առաջատարին հետապնդող խմբի մեջ է:**

**B խմբում Գուլնար Մամադովան ու Էնգին Տոպակը 8 հնարավորից վաստակած 6,5-ական միավորով գլխավորում են աղյուսակը: Տիգրան Սիմոնյանը ոչ-ոքի խաղալով Ալեքսեյ Գուբայդուլինի հետ, վաստակեց 4 միավոր: Իսկ Դավիթ Գեւորգյանն ունի ընդամենը 2,5 միավոր: Նա պարտվեց Կոնստանտին Զալկինդին:**

# Խաղաղ տուր

**Լինարեսի շախմատի մրցաշարի 3-րդ տուրի բոլոր պարտիաներն էլ խաղաղ ելք ունեցան: Արոնյանը հաշտություն կնքեց Թոփալովի հետ: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Հաշիմով-Գրիշչուկ, Գելֆանդ-Վայեխո պարտիաները: 4-րդ տուրում Արոնյանը սեւերով կխաղա ադրբեջանցի Հաշիմովի հետ: Կկայանան նաեւ Գրիշչուկ-Վայեխո, Գելֆանդ-Թոփալով պարտիաները:**

# Մխիթարյանը կրկին գոլ խփեց

**Նախապատրաստական շրջանում էլ Դոնեցկի «Մետալուրգում» հանդես եկող Հենրիխ Մխիթարյանն աչքի է ընկնում արդյունավետ խաղով: Իսպանական «Մարբելյայի» հետ խաղում Հենրիխը դարձավ գոլի հեղինակ: Այդ խաղում «Մետալուրգը» հաղթեց 4-0 հաշվով:**

**Առաջին խաղակեսում «Մետալուրգի» կազմում հանդես եկավ Արտակ Դաշյանը, ընդմիջումից հետո խաղադաշտ մտավ Հենրիխ Մխիթարյանը: Հիշեցնենք, որ նա Մոսկվայի «Լոկոմոտիվի» հետ կայացած նախորդ խաղում էլ գոլի հեղինակ էր դարձել` փրկելով թիմին պարտությունից:**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**«Լույս» հրատարակչություն» ՓԲԸ տարեկան ընդհանուր ժողովի հրավիրման մասին**

Ս/թ մարտի 5-ին, ժամը 15-ին ընկերության վարչական շենքում (հասցեն` Երեւան, Իսահակյան 28) հրավիրվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է սույն հայտարարության հրապարակման պահի դրությամբ:

1. Ժողովի օրակարգում ընդգրկված են հետեւյալ հարցերը.
2. Ընկերության տարեկան հաշվետվության հաստատումը.

Ֆինանսական եւ կազմակերպչական այլ հարցեր:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ժողովում քննարկվող հարցերը եւ նյութերը կարող են ստանալ մինչեւ ժողովի սկիզբը` յուրաքանչյուր աշխատանքային օր` ընկերության վարչական շենքում:

*ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ*

AZG NEW PDF.qxd 2/16/2010 10:24 PM Page 1



# Կովկասում չճանաչված հանրապետությունների ճանաչումն առայժմ չի մտնում Իրանի պլանների մեջ

## Հայտարարել է Ռուսաստանում Իրանի դեսպանը

Փետրվարի 15-ին «Էխո Մոսկվի» ռադիոկայանին տված հարցազրույցում Ռուսաստանում Իրանի դեսպան **Մահմուդրեզա Սաջադին** նշել է, որ իր երկիրը չի շտապում ճանաչել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը: Շեշտելով, որ Իրանը դատապարտել է անցյալ տարվա վրացական ագրեսիան, Սաջադին նշել է. «Մենք պատրաստ ենք միջոցներ տրամադրել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի վերականգնման համար, սակայն կովկասյան տարածաշրջանում անկախ հռչակված երկրների անկախությունը ճանաչելը դեռ չի մտնում մեր հիմնական քաղաքականության մեջ»: Իրանի դեսպանն այս դիրքորոշումը հիմնավորել է այն հանգամանքով, թե «այդ քայլը կբերի նոր պատերազմներ եւ նոր արյունահեղություններ աշխարհում»: Սաջադին հիշեցրել է, որ Իրանը չի ճանաչել նաեւ Կոսովոյի անկախությունը:

Հավելենք նաեւ, որ 2008-ին Իրանի արտաքին գերատեսչության ղեկավար Մանուչեհր Մոթաքին հայտարարեց, թե կոնկրետ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը ճանաչելու վերաբերյալ «Իրանը հստակ դիրքորոշումը դեռ չունի»: Սակայն Մոթաքին շեշտել էր, որ Թեհրանը ուշադրությամբ է հետեւում Կովկասում իրադարձությունների զարգացմանը, «իսկ այստեղ իրավիճակի սրումը հղի է ծանր հետեւանքներով», ընդգծել էր Իրանի արտգործնախարարը:

Կովկասյան մեկ այլ չճանաչված հանրապետության՝ ԼՂՀ-ի հիմնահարցում, սակայն, Իրանը որոշ ակտիվություն ցուցաբերում է: Մեկ ամիս առաջ Բաքու այցելած այդ երկրի փոխարտգործնախարար **Հասան Գաշգավին** հայտարարեց, որ հակամարտության լուծման բանալին հենց տարածաշրջանում է, այլ ոչ հեռավոր երկրներում (**«Ազգ»**-ը գրել էր այդ մասին- Հ. Ա.): Իրանցի դիվանագետը նույնիսկ նշել էր, որ «արդարության հիմքի վրա տարածաշրջանում կհաստատվի վերջնական խաղաղություն»: Իրանը միշտ էլ պատրաստակամություն է հայտնել միջնորդ լինելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ. երկու երկրների հետ էլ Իրանն ունի համատեղ ծրագրեր, սակայն, ինչպես պարզվում է, Իրանի միջնորդությունը կարող է նախ չլինել Արեւմուտքի հետ ունեցած լուրջ խնդիրների պատճառով, եւ բացի այդ՝ մեր հարավային հարեւանի դիրքորոշումը Ղարաբաղի հարցում այնքան էլ օբյեկտիվ չի հնչում. «Կովկասում չճանաչված հանրապետությունների ճանաչումը չի մտնում Իրանի պլանների մեջ»:

Հ. Ա.

# Ո՞վ է մասնակցելու. սա է խնդիրը

**«Ազգ»-ը նախորդ համարներում անդրադարձել էր ԱՄՆ-ում գտնվող հայկական կազմակերպությունների նախատեսված հանդիպմանը ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ: Մենք տեղեկացրել էինք նաեւ, որ այդ հանդիպումը հետաձգվել էր, ըստ որոշ տեղեկությունների՝ Վաշինգտոնում տեղացած առատ ձյան պատճառով, իսկ ըստ որոշների էլ՝ հրավիրված կազմակերպությունների ցանկում ճշգրտումներ անելու համար: Ստացվել է այնպես, որ Հայ օգնության միությունը, որը բազմիցս մասնակցել է ԱՄՆ իշխանությունների հետ հայերին հուզող խնդիրների քննարկմանը, դուրս է հանվել հրավիրյալների ցուցակից:**

**Երեկ «Ուրբաթ» մամուլի ակումբում այս կապակցությամբ իր մտահոգությունները հայտնեց ԱԺ ՀՅԴ խմբակցության անդամ Ալվարդ Պետրոսյանը: Պատգամավորը նշեց, որ այդ որոշումը անարդար է, քանի որ «Կանանց ձայնը բարձրացնող կազմակերպության ներկայությունը հավաքին պարզապես անհրաժեշտություն է,-շարունակելով՝ Պետրոսյանն ասաց,- ՀՕՄ-ը նամակ կգրի ԱՄՆ պետքարտուղարություն՝ պահանջով՝ վերանայել դիրքորոշումը»:**

**Ալվարդ Պետրոսյանը նաեւ նկատեց, որ սփյուռքում բոլոր ժամանակներում էլ հայկական ավանդական կուսակցությունները, կազմակերպություններն ունեցել են տարբեր վեճեր. «Սակայն երբ խոսքը գնացել է ապրիլի 24-ի մասին, բոլորը միասնական են եղել: Իսկ այժմ ստացվում է, որ հայ-թուրքական հարցերով քննարկումներից զորեղ մի կազմակերպություն է դուրս թողնվում, այն էլ վերոհիշյալ հայկական կազմակերպությունների մասնակցությամբ», ընդգծեց Պետրոսյանը:**

Ն. Մ.

# Կանայք՝ տնային գործեր, տղամարդիկ՝ կոշկակար ու ոսկերիչ

## Հայերը Թուրքիայում

**Ստամբուլում հրապարակվել են «Եվրասիական համագործակցություն» կազմակերպության եւ Ստամբուլի մշակույթի ինստիտուտի «Համաշխարհային քաղաքական միտումներ» կենտրոնի անցկացրած սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները: Ի դեպ, վերջինս հիմնականում զբաղվում է Թուրքիայում ապօրինի բնակվող հայերի խնդիրներով: Ուսումնասիրություններով պարզ է դարձել, որ հայ ապօրինի միգրանտների 48 տոկոսը Թուրքիա է եկել 1988-ի ավերիչ երկրաշարժից հետո՝ աշխատանք փնտրելու: Ուսումնասիրությունների հեղինակներից Ալին Օզինյանը նշել է, որ վրացթուրքական սահմանային անցակետը անցնելիս հայ միգրանտներից շատերը նշում են, թե Թուրքիա են եկել մեկ ամսով. «Իրականում այդ «մեկ ամիսը» շատ երկար է տեւում», ընդգծել է Օզինյանը:**

**Պարզվել է նաեւ, որ միգրանտների 96 տոկոսը կանայք են, եւ միայն 4 տոկոսը՝ տղամարդիկ: Սոցիոլոգները դա պայմանավորում են նրանով, որ Թուրքիայում ավելի շատ աշխատանքներ կան կանանց համար: Հայ կանանց 72 տոկոսը հարեւան երկրում զբաղված է տնային աշխատանքներով, 18 տոկոսը դայակներ են, 6 տոկոսը՝ վաճառողուհիներ, եւ միայն 4 տոկոսն է, ուսումնասիրությունների համաձայն, զբաղված այլ ոլորտներում: Ըստ որում՝ նրանց ամսական աշխատավարձը կազմում է 500-1000 դոլար: «Իսկ տղամարդիկ հիմնականում ոսկերչություն կամ կոշկակարություն են անում», նշել է Ալին Օզինյանը:**

**Վերջինս նաեւ ընդգծել է, որ Թուրքիայում ապրող շատ հայեր չեն բացահայտում իրենց ազգությունը. «Հատկապես Հրանտ Դինքի սպանությունից հետո հայերը Թուրքիայում սկսեցին վախենալ իրենց կյանքի համար», նկատել է Օզինյանը:**

**Ուսումնասիրությունները ներառել են նաեւ հայ միգրանտների երեխաներին: Ըստ այդ արդյունքների՝ հայ միգրանտների երեխաների մոտավոր թիվը Թուրքիայում կազմում է շուրջ 600-800: Ըստ որում՝ նրանցից շատերը չեն համարվում ոչ Հայաստանի, ոչ էլ Թուրքիայի քաղաքացիներ, հետեւաբար չեն կարող եւ չեն գնում դպրոց: «Ընդհանուր առմամբ, հայ միգրանտների 96 տոկոսը ցանկանում է վերադառնալ հայրենիք», եզրափակել է Օզինյանը:**

**Կարելի է մեր կողմից արձանագրել, որ հայ միգրանտների ցանկությունները, լինեն նրանք «թշնամի» Թուրքիայում, թե բարեկամ Ռուսաստանում, ոչնչով չեն տարբերվում իրարից. նրանց մեծամասնությունը ցանկանում է վերադառնալ հայրենիք, «էլ ավելի մեծամասնությունը» չունի, սակայն, այդ հնարավորությունները, ոմանք՝ զուտ ֆինանսական, ոմանք էլ նաեւ՝ փաստաթղթային: Սակայն, չգիտես ինչու, ինչպես «թշնամի» Թուրքիայում, բարեկամ Ռուսաստանում էլ շատերը չեն ցանկանում բացահայտել իրենց հայ լինելը: Թե Ռուսաստանում հայերն ինչի՞ց են վախենում, կարծում եմ, ակնհայտ է՝ արտաքսումից, որը, որքան էլ տարօրինակ հնչի, չի սպառնում «թշնամական» Թուրքիայում ապրող հայ ապօրինի միգրանտներին:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

# Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

**Կենտրոնական բանկի խորհուրդը փետրվարի 16-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց «Թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների, սակարկությունների կազմակերպիչների կողմից կանխիկ դրամով կատարվող կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը եւ ժամկետները, թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների, սակարկությունների կազմակերպիչների հաշվառման» կարգը:**

**Գրանցվեց եւ լիցենզավորվեց «Բնակարան երիտասարդներին» ՈւՎԿ ՓԲԸ-ն:**

**Խորհուրդը որոշեց արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիա տրամադրել «Ֆրեշ» ՍՊԸ-ի թիվ 1 մասնաճյուղին: Գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրվեց «ԼԵՌԱԶ» ՍՊԸ-ին: Ուժը կորցրած ճանաչվեց «Կրեդիտ Հաուս» ՍՊԸ գրավատան կազմակերպման ԳԳ-Ե 144 լիցենզիան՝ իր դիմումի համաձայն:**

**Խորհրդի որոշմամբ «Արցախբանկ» ՓԲԸ-ին տրամադրվեց «Ալլուր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն:**

**Խորհուրդը որոշեց հրապարակել Կենտրոնական բանկի 2009 թ. չորրորդ եռամսյակի «Բանբերը»:**

***ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

# Վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվեց 6.0 տոկոս

2010 թ. փետրվարի 16-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.0%:

2010 թ. հունվարին դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է շուրջ 1.7% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը կազմել է 7.0%՝ գերազանցելով նպատակային միջակայքի վերին սահմանը 1.5 տոկոսային կետով:

Հանքահումքային ու հիմնական պարենային ապրանքների միջազգային գների աճը, ինչպես նաեւ ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությամբ պայմանավորված ամբողջական պահանջարկի աստիճանական վերականգնումը նպաստում են առկա գնաճային միջավայրի պահպանմանը: Թեեւ կանխատեսվող հորիզոնում 12-ամսյա գնաճը գերազանցելու է նպատակային թիրախը, նախորդ տարվա գնաճային զարգացումներով պայմանավորված, 2010 թ. առաջին եռամսյակում իր բարձրակետին հասնելուց հետո այն հետագայում որոշակիորեն նվազելու է:

Գնաճի վերոնշյալ միտումների ներքո դրամավարկային քաղաքականության աստիճանական կոշտացմամբ ԿԲ խորհուրդը նպատակ ունի աստիճանաբար նվազեցնել կանխատեսվող հորիզոնում գնաճի շեղումները նպատակային թիրախից:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**Մրցույթի հրավեր 037/10/PRO**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ 4 պետական քոլեջներին ավտոուսուցման սարքավորումներ մատակարարելու համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. մարտի 12, ժամը 17:00:

UNDP

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԲԵՌՆԱՏԱՐ**

1712 Մերսեդես Բենց մակնիշի 1985թ. արտադրության բեռնատար, 20 տոննա բեռնատարողությամբ, թափքով քարշակ, կիսակցորդ 8 անիվով, շարժիչի հզորությունը 230 ձիաուժ, փոխանցման տուփը 16 աստիճան հզորացված:

Գինը՝ պայմանագրային:

Մանրամասների համար զանգահարել 099 330470 հեռախոսահամարով:

*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*

ՍԱՐԻ ԹԵՅ

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
և ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

**Մեծածախ գնումների համար զանգահարել** 47-27-20, 47-03-63

**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ** համայնքի ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 16,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. փետրվարի 23-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

*«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր*

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ *Օրենսդրական նորություններ* ♦ *Պարզաբանումներ* ♦ *Խորհրդատվություն*

*«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար*

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 16.21.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: